

Մ. ՎԱՍԻԼԵՆԿՈ

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԸ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ՄԵԶ

355.4
4-26

ՊԵՏՐՍ

ՌԱԶՄՐԱՏԲԱԺԻՆ

ՅԵՐԵՎԱՆ

1933

355.4
4-26

Մ. ՎԱՍԻԼԵՆԿՈ

**ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԸ
ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ՄԵԶ**

1008
355.4



08 AUG 2013

41 726

Պատ. խմբագիր՝ Գ. Աբայան
Թարգմ. Է. Չաղեքյան
Տեխ. խմբ. Գ. Զենյան
Սրբագրիչ՝ Է. Ստրիկյան

Հանձնված է արտադրության 9 հունիսի 33 Բ՝
Ստորագրված է տպելու 27 հուլիսի 33Բ՝

Պետերասի Տպարան, Գլավիտա № 8207 (բ), Հրատ. № 263Դ, Պատվեր
№ 1575, Տիրամ 2000

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍԿԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Հակառակորդի հետախուզությունը թշնամու դեմ պայքարելն ավելի հեշտ է, յերբ գիտես, թե վորտեղ է նա գտնվում, գիտես նրա քանակը, նրա մարտունակության ու քաղաքական կայունության աստիճանը, գիտես թե ինչպես է նա սպառազինված, ինչ է անում և ինչ է մտադիր անելու: Յեթե չգիտես հակառակորդի տեղը՝ հարվածդ կարող է այնտեղ դիպչել, ուր հակառակորդ չկար, իսկ միջևնույն ժամանակ ինքդ կարող ես հարված ստանալ այնտեղից, վորտեղից նրան չես սպասում: Յեթե չգիտես հակառակորդի քանակը և նրա մարտունակության ու քաղաքական կայունության աստիճանը, սխալմամբ կարող ես ավելի կամ, ընդհակառակը, պակաս ուժ հակադրել նրան՝ քան հարկավոր է: Յեթե գիտես, թե ինչ է անում հակառակորդը, կամ ինչ է մտադիր անելու, ավելի հեշտ է նրան թակարդել մեջ պցել և ապա ավելի հեշտ ջանքատեսել: Հակառակորդի մասին այդ բոլոր տեղեկությունները հավաքելու համար մարտիկները

և հրամանաաբուժյան կողմից ձեռք առնվելիք միջոցները կոչվում են «հակառակորդի հետախուզություն»:

2. վայրի հետախուզությունը

Մարտն ափերի հեշտ է մղել, յերբ ծանոթ են այն վայրին, ուր պետք է կույր բռնվեն: Վայրին անծանոթ լինելու դեպքում կարող են այնպիսի խոչընդոտների հանդիպել, վորոնց հաղթահարելը դժվար է առանց նախապես պատրաստվելու: Հավաքել վայրի մասին տեղեկություններ՝ նշանակում է կատարել «վայրի հետախուզություն»:

3. Բնակչության հետախուզությունը

Բնակչությունը կարող է համակրանքով վերարբերվել դեպի Կարմիր բանակը, ողնել նրան մարտում և հետախուզության ժամանակ: Սակայն բնակիչներին թվում կլինեն նաև դասակարգման խնդիրները, վորոնք կոժանդակեն թշնամուհ, բնակչության մոտ դանվող բանջարեղենի, հացի, խաբի և այլ մթերքների պաշարը կհեշտացնի պարենափորման խնդրի լուծումը: Բայց կարող է այդտեղ պաշար չլինել: Բնակչության մեջ կարող են հիվանդություններ լինել, վորոնք թույլ չեն տա բնակելի վայրերն ոգտադործել գորքի գիշերելու համար: Հավաքել այն բոլոր տեղեկությունները, վորոնք վերարբերում են բնակչությանն ու նրա դեպի մեղ ունեցած տրա-

մաբուժյանը, կոչվում է «բնակչության հետախուզություն»:

4. Ինչպե՞ս է կատարվում հետախուզությունը Հակառակորդի, վայրի և բնակչության հետախուզությունը կարելի չէ կատարել.

1. Դիտելով հեռվից

2. Տեղական բնակիչների հարցումվորձով.

3. Մոտենալով հակառակորդին կամ հենց իրեն վայրում.

4. Մարտի բռնվելով և դերիներ վերցնելով.

5. Փաստաթղթերի ուսումնասիրությամբ (հակառակորդի կողմից թողնված բնակարաններում կամ սպանվածների մոտից վերցված).

6. Գաղանի հետախուզությամբ կամ լրտեսությամբ:

5. Ո՞վ է կատարում հետախուզությունը.

Հետախուզության բոլոր տեսակները (բացառությամբ գաղանի կամ այլ խոսքով ազենատուրային հիմնականում կատարվում են հետախուզական գիրքերի միջոցով, վոր բազկացած են լինում 2 հոգուց մինչև մի ամբողջ ջուկ. հետախուզական խմբերի և հետախուզական ջուկատների միջոցով: Հետախուզական այդորգանների անմիջական մասնակիցները՝ հետախույղները հանդիսանում են կարմիր բանակայինները և հրամատարները: Այստեղից պարզ է, վոր բոլոր կարմիր բանակայինները և

հրամատարները պետք է պատրաստված լինեն հետախուզություն կատարելու համար: Լինել հետախուզող, այդ նշանակում է տարվա բոլոր յեղանակներին, գիշեր թե ցերեկը, յուրաքանչյուր հանձնարարություն կատարելիս, կարողանալ հակառակորդի վայրի և բնակչության տրամադրությունների մասին այնպիսի տեղեկություններ ստանալ, վորոնք կողմեն հրամատարությանն իմանալ հակառակորդի, վայրի և բնակչության մասին, ըստ հնարավորության, բոլորն, ինչ վոր գործերին կարող է ուժանդակել հեշտությամբ և ավելի քիչ կորուստներով հաղթանակել:

II. ԻՆՉՊԵՍ Ե ԿԱՏԱՐՎՈՒՄ ԴԻՏՈՒՄԸ ՀԵՏԱԽՈՒՋՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

6—7. Ինչպես ընտրել և գրավել դիտելու համար տեղը

Դիտելու համար ամենալավ տեղը կլինի այնպիսին, վորտեղից դու հակառակորդին լավ տեսնում ես, իկա նա քեզ չի տեսնում:

Գործարանային ծխներույզը, զանգակատունը, առանձին կանգնած բարձր մասը, դաշտավայրում յեղած մենավոր բլուրը, դաշտում գտնվող առանձին տնակը՝ այդ բոլորը այնպիսի կետեր են, վորտեղից շատ լավ կարելի յե դիտել և տեսնել հեռուն: Սակայն և վոչ մի հմուտ հետախուզող այդ կետերը չի ընտրի վորպես դիտարան: Հմուտ հետախուզողը գետի, վոր հե-

տախուզության ժամանակ, առաջինը, վոր գրավում է ուշադրությունը և վորտեղ փնտռում են հակառակորդին դա հենց առանձին կանգնած բարձր առարկաներն են: Ուստի հետախուզության մեջ յեղած ժամանակ, դիտելու համար ընտրիր այնպիսի տեղեր, վորոնք ավելի քիչ են աչքի ընկնում:

Յենթադրենք, դիտելու համար վորոշել ես ոգտագործել բարձր կանաչով ծածկված թումբը: Սխալ կլինի, յեթե դու բաց կերպով ուղղակի գնաս այնտեղ: Հմուտ հետախուզողը վոչ մի դեպքում այդպես չի անի: Նա կսկսի մտանալ թմբին ծածուկ, ոգտագործելով առուները, ակոսները և թփերը: Հասնելով բաց դաշտին, նա առաջ կշարժվի սողալով: Մոտենալով թմբին, նա միտնգամից դուրս չի հանի գլուխը՝ դիտելու համար, այլ գլուխը կծածկի կանաչի մեջ և այնուհետև շատ զգուշորեն, աստիճանաբար այնքան կբարձրացնի, մինչև վոր հնարավորություն կունենա տեսնելու վայրը և դիտելու հակառակորդին:

Ուրեմն սովորիր ծածուկ գրավել քո ընտրած տեղը հակառակորդին դիտելու համար:

Հակառակորդին դիտելու ժամանակ քեզ այնպես պահիր, ինչպես այդ կանեյիթ այն դեպքում, յերբ զգայիք, վոր հակառակորդի հարյուրավոր աչքեր հետեվում են քո ամեն մի շարժմանը և հարյուրավոր հրացաններ հետամուտ են յուրաքանչյուր քո անզգուշ քայլին,

նայիր մեծ գործարանին՝ առաջինը, վոր կգրավի քո ուշադրությունը՝ դա ծխնելուցն է, նայիր խրճիթին, առաջինը վոր կտեսնես՝ դարձյալ ծխնելուցն է, չնայած վերջինն անհամեմատ ցածր է, քան գործարանինը:

Ինչո՞ւ առաջին հերթին այդ առարկաներն են աչքի ընկնում, վորովհետև նրանք պարզ պատկերավորվում են յերկնքի Փոնի վրա, մինչդեռ մյուս առարկաները կարծես միանում, ձուլվում են վայրի հետ:



Նկ. 1 ճիշտ է



ճիշտ չէ

Նայիր այն հետախույզին, վորն ընտրելով թուփը հաճախակորդին դիտելու համար, նայում է վոչ թե թփի աջ կողմից այլ ուղղակի վերեվից: Այդ հետախույզը իրեն գլխով կհիշեցնի խրճիթի ծխնելուցը, վորը պարզ պատկերավորվում է յերկնքի վրա և հետևապես նկատելի կլինի հարյուրավոր մետք հեռավորությունից: Այժմ նայիր այն հետախույզին, վորը ձեզքելով թուփը, նայում է նրա միջով, ինչպես հրակնատից: Այդպիսի հետա-

խույզին չես կարող հայտարերել, մոտեցավ թփին մինչև իսկ 5 մետր հեռավորության վրա: (Նկար 1 և 2):

Դիտիր պառկած, առանց դուրս ցցվելու: Դուրս նայիր թփի, թմբի կամ ծառի աջ կողմից և միայն ծայրահեղ դեպքում քազստոցի վրայից (Նկար 3—5):

8. Ինչպես զննել վայրը

Վայրը դիտելու ժամանակ, նրա վրա հաճախակորդին հայտարերելու համար, չպետք է անկանոն կերպով աչքը դաշտի վրա դես ու դեն տանել, նախ դաշտը պեճք է բաժանել շերտերի և ուշադիր կերպով քայլ առ քայլ նայել՝ նախ աջից ձախ, ապա ձախից աջ, սկսած ամենամոտ կետից և վերջացնելով հորիզոնի զննությամբ (Նկար 6):

Ահա մի որինակ, վորը պարզաբանում է, թե վորքան ոգտավեա է դաշտը զննել հաջորդաբար՝ ըստ շերտերի և քառակուսիների:

Զուկի հրամատարն առաջարկում է կարմիր բանակայիններին ուշադրությամբ նայել իրեն: Այնուհետև հրամայում է բոլորին յերեսները յետ դարձնել, իսկ ինքը միևնույն տվյալ գործողությունները— 1) փոխում է մագերի սանրված քը, մատիտը դնում է ականջի հետևվր. 2) արձակում է ոճիքի կոճակներից մեկը. 3) շրջում է կրծքի շքանշանը կամ այլ նշանները. 4) արձակում է վերնաշապիկի



Նկ. 2 ճիշտ է



ճիշտ չէ



Նկ. 3 ճիշտ է



ճիշտ չէ



Նկ. 4 ճիշտ է



ճիշտ չէ



Նկ. 5 ճիշտ է




ճիշտ չէ

կողքի Կրպանի կոճակը, թուլացնում է գոտին, դուրս է հանում կոշիկի կանթը և գլխարկը ծածկում է հակառակ ուղղությամբ, չքոճիքը, կազիրյոկը դեպի յետ:

Այդ բոլորը կատարվելուց հետո, ջուկը հրամանատարը յետ է դարձնում կարմիր բանակայիններին և ինչից է առաջարկում հայտնաբերել այն բոլոր փոփոխությունները, վոր կատարվել են իր արտաքինում: Ինչպես կանոն, անփորձ կարմիր բանակայիններն անմիջապես կնկատեն, վոր գլխարկը հակառակ է ծածկված, բայց չեն նկատի տասնյակ այլ մանր փոփոխությունները: Դա տեղի յե ունենում այն պատճառով, վոր նրանք դիտելու գործում վարժված չեն: Իսկ յեթե բանակայիններին առաջարկվի, վոչ թե այնպես նայել ջուկի հրամանատարի վրա, այլ նայել ուշագրությամբ, սկսած գլխից մինչև վոտների ծայրերը, գլխին, պարանոցին, կրծքին, ձեռքերին, վոտքերին և նկատել, թե արդյոք ամեն ինչ կարգի՞ն է, ապա կարմիր բանակայինները կնկատեն, վոր իրոք փոփոխություններ են տեղի ունեցել և կմատնանչեն այդ փոփոխությունները:

Աստիճանաբար դիտելու ունակությունը կսկսի ավելի զարգանալ և հետագայում սովորեցնողն ինչպիսին ուզում է՝ թեկուզ քիչ նկատելի փոփոխություն ել կատարի իր արտաքինում, սովորողները անմիջապես վոչ թե

միայն կնկատեն այդ, այլև կատեն ինչումն ևն
այդ փոփոխությունները:



Նկար 6 ... կետագծով ցույցն տրված դիտողի
հայացքի շարժումը, իսկ բոլորակներով՝ այն կետերը,
վորոնց վրա կենտրոնացվում է դիտողի ուշադրու-
թյունը:

Մակայն ով դասարանում ձեռք է բերում
դիտելու ունակություն, նա պատրաստ է նաև
վարժությունների ժամանկ լուծել հետախու-
ցությանը վերաբերող խնդիրներ: Միայն թե
նրան հիշեցնեք, վոր վայրը պեղք է ուսումնա-
սիրել նույնպես ուշադրությամբ և նույն հե-
տեվողականությամբ, ինչպես սովորողն ու-
սումնասիրում եր իր դասատուն. նախ «գլու-
խը»-դա կլինի դիտողին ամենամոտ վայրի
չերտը, վորն աջից և ձախից սահմանափակ-
վում է դիտողության սեկտորի սահմաններով
և ըստ խորության 300—400 մետրով: այնու-
հետև «պարանոցն ու կուրծքը»-դա կլինի դի-
տողից 400—800 մետր հեռավորության վրա
գտնվող վայրը. և վերջապես «փոտները»՝ այն
բոլորը, ինչ վոր յերում է 800 մետրից ավելի
հեռու: Դրանից հետո սովորեցնողը պա-
րապմունքների ժամանակ, կամ հակառակոր-
դը մարտում, թեկուզ ինչպիսի խորամանկու-
թյունների յեղ դիմելու լինի, քողարկելով իր
ներկայությունը ծառի ճուղքերով, խառի նոր
դեղերով և այլն, հետախույզը միենույն է
կհայտարերի վայրում տեղի ունեցած ամե-
նաչնչին փոփոխությունները, տեսնելով
թուփ կամ կոշտ այնտեղ, վորտեղ նրանք
չկային, անմիջապես կկատկածի, վոր թուփը
կամ կոշտն իզուր չեն յերևան յեկել: Իսկ
յերբ այնպիսի կատկած ծագել է, հետախույզը
կկրկնապատկի իր ուշադրությունը և վերջի-

վերջո կհայտարարի հախառակորդին, նրա քողարկած խրամատը, գնդացիքը, հրամատարական կետը կամ դիտակետը:

9 Պատմական հատկանիշները և նրանցից ոգովելու ձեվերը հետախուզության ժամանակ:

Զորամասը հեռվից նկատելի չէ, վորովհետև նա հագնված է հատուկ տարազով, զինված է և շարժվում է հատուկ շարքերով ու կարգերով: Նրա հենց այդ առանձին տեսքն այն հատկանիշն է, վորով հետախուզյալը, հեռվում նկատելով մարդկանց խմբավորումը, կարող է անմիջապես վորոշել, թե այդ զորմասն է թե տեղական բնակելիների ամբոխ: Այդպիսով սպառազինումը, հագուստը, շարժման շարքն ու կարգը հանդիսանում են ուղղական կարեւորագույն հատկանիշները:

Ամեն մի վաշտ, ամեն մի գունդ ունի իր յերթալին խոհանոցները: Իսկ նույնպես կարելիորագույն հատկանիշներից մեկն է: Հետախուզյալը հայտարարել է անտառի յեզրի մոտ աստը ծուխ արձակող յերթալին խոհանոցներ և նրանց մոտ քանից վոչ ավելի մարդ: Այդ հանգամանքը թույլ է տալիս հետախուզելին անմիջապես յեզրակացնելու, վոր մոտակայքում վորեւ տեղ տեղավորված է մի ամբողջ գունդ, վորի համար և խոհանոցները կերակուր են պատրաստում:

Ռազմական սայլակի անիվների միջև յեղած տարածությունն ավելի լայն է, քան գյուղական սայլերինը, նույնպես լայն է նաև հրետանու անիվների միջև յեղած տարածությունը, վորոնք բացի դրանից ավելի խոր հետքեր են թողնում հողի մեջ: Անիվների հողի մեջ թողած հետքերը ուղղական հատկանիշ են: Ճանապարհի վրա հայտարարելով անիվների լայն և խոր հետքերը, հետախուզյալը կարող է յեզրակացնել, վոր այդտեղից անցել է ուղղական գումակ, կամ հրետանի: Հայտարարելով նույն տեղում կոշիկների կամ սմբակների մեծ քանակությամբ հետքեր, նա կարող է յեզրակացնել, վոր այդ ճանապարհով անցել է հետեվակ գործատու, հեծելազոր կամ հրետանի:

Հմուտ հետախուզյալը կարող է միմիայն ուղղական հատկանիշների միջոցով հայտարարել հախառակորդի ներկայությունն այնտեղ, ուր նա չի տեսել նրան: Նույն հատկանիշներով նա կարող է վորոշել նաև, թե ո՞ւր է նա գնացել, վաղո՞ւց է անցել, և մինչև իսկ ի՞նչ կարգով է հախառակորդը հեռանում:

Սակայն պետք է կարողանալ ոգավել հատկանիշներից: Ահա մի օրինակ: Նկատելով, վոր հախառակորդի դասավորության վայրում թիփերով ծածկված բարձրունքին հաճախ մոտենում են առանձին ձիավորներ, իսկ յերբեմն ել ավտոմոբիլներ, անփորձ հետա-

խույզը զեկուցագրեր կուղարկի, վոր «հակա-
ռակորդի կողմում հայտարերել և չորս ձիա-
վոր և մեկ ավտոմորի»։ Այգպիսի տեղեկու-
թյունը հրամատարի համար հետաքրքիր չէ,
վորովհետև հակառակորդը քիչ ձիավորներ և
քիչ ավտո չունի։ Իսկ հմուտ հետախույզը
կհաղորդի մոտավորապես այսպես. «Թփե-
րով ծածկված բարձրունքին կես ժամ տեվո-
ղության ընթացքում արեվելյան կողմից
բարձրունքի յետևից տարբեր ժամանակ մոտե-
ցել են չորս ձիավոր, իսկ անտառից յեկնող
ձանապարհով հարավային կողմից մոտեցել և
մեկ ավտո, վորը հինգ բոպեյից հետո վերա-
դարձավ»։ Այստեղից հրամատարը համարյա
անսխալ կվորոշի, վոր Թփերով ծածկված
բարձրունքում տեղավորված և հակառակորդի
հրամատարական կետը։ Ով լավ ծանոթ և
ուզմական գործին, նա կարող է ամբողջի մի
մասնիկի միջոցով, ուզմական հատկանիշի
միջոցով բնորոշել և ամբողջը։ Ահա որինակ-
ներ։

1. Յեթե մոտենում ես դյուղին, վոչ մի
մարդ չես նկատում և վոչ մի ձայն չես լսում,
այդ պեսք և ուշադիր լինես։ Տես, արդյո՞ք
հակառակորդը այդտեղ դարան չի մտել։
2. Աղմուկը, շների հաջոցը նույնպես կա-
րող են գյուղում թշնամու ներկայության նշան
ծառայել։
3. Անտառում թռչունների աղմուկը կա-

րող և ցույց տալ, վոր թշնամին թաղնվել և
անտառում։

4. Չանգահատան, վիշկանների և ծառերի
վրա յերեվացող մարդկային կերպարանքները
կարող են հակառակորդի դիտողներ նշանա-
կել։

5. Սվինների, գնիվորական կաթսաների
փայլը, հրացանի ձիգի, ծխախոտի կամ լուց-
կու կրակը, ազդանշանային լույսերը ցույց են
տալիս թշնամու ներկայությունը։

6. Խարույկները, անտառի մեջ և գյու-
ղում խարույկների ծուխը, շարժական խո-
հանոցների ծուխը ծառայում են վորպես թշնա-
մու ներկայության հատկանիշ։

7. Խարույկի մոխիրը կարող է ցույց տալ,
թե վաղո՞ւց է արդյոք այդտեղ յեղել հակա-
ռակորդը։

8. Մարդկանց, ձիերի և սայլակների
հետքերով կարելի յե իմանալ՝ վոչ միայն թե
ուր է գնացել հակառակորդը, այլ և նրա թի-
վը ու յերբ և նա անցել։

9. Փոշու ամպերը կարող են ցույց տալ
գորքի շարժումը, յեթե շարժվում և հետեվա-
կը, փոշին տարածվում և ցածր և խիտ. յեթե
շարժվում և հեծելազորը՝ փոշու սյունն ավելի
բարձր է, յերբ շարժվում և հետեվակը, հաճախ
փոշու մեջ կայծեր են յերեվում փայլի նման՝
այդ սվինների ծայրերն են փայլում։ Հրե-
տանու և գյուղում հրացան փոշին անհա-

188
35120



վասարաչարի և լուս բարձրութեան և իրենեց մի
ամբողջական ամպ չի ներկայացնում։ Ավտոն
բարձրացնում և արագ շարժվող փոշու ամպ։

Մովսրաբար ամենաչնչին փորձառութեան
նը բավական և լինում, վորպեսզի փոշու ամ-
պի համեմատ վորոչենք թե, ով և փոշի բարձ-
րացնողը։ Իհարկէ լինում են սխալներ։ Նա-
խիրը կարող և փոշի բարձրացնել և թյուրի-
մացութեան մեջ ձգել անփորձ հետախույզին։
Բայց հմուտ հետախույզը, համեմատելով մի
չարք ուրիշ հատկանիշների հետ, կարող և
հայտնաբերել իսկութիւնը։ Բացի փոշուց,
չարժիող գործարար և նույնիսկ նրա կազմը
կարելի չէ հայտնաբերել ճայնի միջոցով։

Հետեւակի գորասյունը շարժվելու ժա-
մանակ նույնիսկ հեռվից լսվում և միատեսակ
խուլ աղմուկ, վորի միջով պարզ առանձնա-
նում և սայլակների դղրդոցը։ Հեծելազորի
չարժումն իմացվում և ձիերի ամբակների
տրոփյունից։ Հրետանու շարժվելու դեպքում,
հեռվից լսվում և յերկաթի սուր ծանր դղրդկոց
և զրնգոց։ Ավտոնների և սանկերի շարժումն
իմացվում և մոտորների աղմուկով։ Շարժվող
մարդկանց առաջացրած աղմուկն ավելի լավ
և լսվում, յերբ ականջդ դնում ես դետնին կամ
յարտփակոցի ցցերի վրա։

Չայնը մեկ վայրկյանում անցնում և 336
թետր, լույսը հաղորդվում և դրեթե ակնթար-
թուրար։ Այդ բանն իմանալով, հետախույզը,

հրացանի բռնկման միջոցով, կարող և իմա-
նալ վոչ միայն հակառակորդի տեղը, այլ
և կվորոշի, թե ինչ հեռավորութեան վրա յե-
նա գտնվում։ Դրա համար բավական և հաշվել,
բանի վայրկյան և անցել հրացանի ձիգի
բռնկումը յերեվալու մոմենտից մինչև այն
մոմենտը, յերբ լսվել և ճայնը։ Բազմապատ-
կելով 336-ը վայրկյանների թվի վրա, հետա-
խույզը կստանա կրակող հակառակորդի և
իրեն միջև ընկած տարածութեանը մեարե-
րով։

III. ԻՆՉՊԵՍ Ե ԳՈՐԾՈՒՄ ՄԱՐՏԻԿԸ ՀԵՏԱԽՈՒ- ՋՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

10. Ինչպես պետք է հազնվի հետախույ-
զը հետախույզութեան գնալու դեպքում

1) Յեթե հետախույզութեան գնալու նշա-
նակում ես ստացել, թող բոլոր ավելորդ
իրերդ, նույն թվում ամեն տեսակի փաս-
տաթղթերդ՝ նամակներդ, ծոցի գրքույկներդ
և այլն, հազիր քեթև և շարժումների հա-
մար հարմար ու գործելու շրջապատին նման-
վող հագուստ։

2. Հանդերձանքդ հարգարիք վրադ այն-
պես, վոր չչարժվի և քայլելու ժամանակ
չխանդարի ու չաղմկի։

3. Աշխատիր, վոր վոչ թեզ և վոչ ել ըն-
կերներիդ վրա չլինեն այնպիսի իրեր, վո-

րոնց փայլով և արեղակի ճառագայթներէ արտացոլութեամբ — կողմնի հակառակորդին հայտարարելու հետախուզութեանը:

4. Յեթե գնալիս պետք է շինել ճազնես, ստուգելը, թե կան արգելք շինելի փեշերի վրա կարած կետեր, վորոնցով շինելիք փեշերն ամբարացվում են գոտուտ, այդ անհրաժեշտ է անազմուկ քայլելու համար:

5. Հետախուզութեանից առաջ սվինդ մրտիր, վորպեսզի նա իր փայլով չմասնի:

6. Ստուգիր քեզ մոտ յեղած փամփուշտների քանակը և վերցրու լրիվ պաշար. թիկունքից փամփուշտ ստանալու վրա հետախուզին հույս դնելը դժվար է, իսկ թշնամուն հանդիպել նա միշտ պետք է նկատի ունենա:

7. Վերցրու քեզ հետ անձեռնմխելի պաշար և պահպանիր այդ:

Լավ կլինի, յեթե կարմիր բանակայինը հետախուզութեան գնալու ժամանակ ունենա իր հետ յերկդիտակ, ժամացույց, մատիտ, հետախուզի ծոցի դրքույկ, իսկ գիշերը կողմնացույց: Յերկդիտակն ոգնում է դիտելուն վոչ միայն ցերեկը, այլ և գիշերը, իսկ կողմնացույցը հետախուզի համար ամենալավ ոգնականն ու ուղեցույցն է:

Յուրաքանչյուր կարմիր բանակային պետք է կարողանա ոգտվել յերկդիտակից և

կողմնացույցից, այլապես նա հետախուզյ չէ կարող լինել:

11. Ինչպես նշել շարժման ուղղութիւնը


Խնդիրը և ուղղութիւնը հետախուզին ցույց է տալիս հետախուզական դիրքի պետք: Սպկայն վայրում արդեն ինքը հետախուզը ճիշտ վորոշում է իր շարժման ուղին: Նա կանխորոշում է իր համար հանգստանալու տեղերը, դիտելու կետերը և այդ կետերի միջև տարածութեաններ անցնելու ձևերը:

1. Ընտրելով քեզ համար շարժվելու ուղղութիւնը, այնպես գարծիր, ինչպես գարծում ես, յերբ հաստատ գիտես, վոր գտնվում ես հակառակորդի դիտողութեան տակ, վորք հսկում է քեզ կամ դարան է պատրաստում քո դեմ:

2. Հիշիր, վոր հետախուզութեան ժամանակը թանկ է և մի մոռանար նախազգուշացման միջոցները, միշտ շարժվիր այն արագութեամբ, վորք ցույց կարվի քո պետի կողմից:

3. Յերեկն ավելի լավ է շարժվել ձորակներով, թփերի միջով, ցանկապատերի և պարիսպների յերկայնութեամբ (նկ. 7):

4. Յերբ պատրաստվում ես մեկ դիտակետից մյուսը տեղափոխվելու, նախապես վորոշիր ավելի վտանգավոր տեղերը, վորտեղ կարող է հակառակորդը դարանամուտ լինել, և մտածիր, թե ինչպես ավելի հեշտ և ապահով անց-



Նկ 7 ... կետագծերով ցույց տրված հետախույժի շարժվելու ուղին մեկ դիտակետից դեպի մյուսն անցնելու համար:

Նեւ այդ տեղերից ու խաբել հակառակորդի ազարջությունը:

5. Շարժման ուղին վորոշելուց հետո, վորոշիր նաև կանգնելու տեղերը՝ հանգստանալու համար, միջնական կետերը դիտելու համար և այն տեղերը, վորտեղ բառ վայրի պայմանների դու պետք է առաջ շարժվես քայլով, ամբողջ հասակով, վորտեղ պետք է վազես կուացած, և վորտեղ սողաս (խուսով ծածկված բաց թմբերը, վորտեղ մարդը կարող է ծածուկ անցնել սողալով): Կարողացիր ոգտագործել վայրը, միշտ և ամեն տեղ կարող ես գտնել մատույցներ, քագտմաններ՝ հանգստանալու և դիտելու համար: Մակայն միմիայն յերկարատև վարժությունը կարող է քեզ սովորեցնել ծածկված շարժվելու ուղիները, վարժվիր դրան դաշտում, պարապմունքների ժամանակ: Յերթի կամ զբոսանքի ժամանակ, յերբ տեղում մի վորեւե աչքի բնկնող ստարկա յես տեսնում, վորձիր վորոշել, թե ինչպես կմտանաս նրան աննկատելի կերպով. վարժվիր աննկատելի կերպով թռչունին կամ այլ վայրի կենդանուն մտանալ, — մի այդպիսի հաջող վարժությունն ավելի հաջող բան կտա, քան տասը դասարանային պարապմունք:

12. Ինչպես հակառակորդին մոտենալու ժամանակ աննկատելի մնալ

1) Դուրս մի ցցիր սպառազինման փայլող մասերը.

2. Թագնվելով մի վորեւե տեղ, հետևիր,

վոր հագուստը իր գույնով չտարբերվի վա-
րից. յեթե նա խիստ տարբերվում է, ավելի
լավ է հագուստիդ թշնամու կողմից անասնելի
մասերը ծածկես խոտով և ճյուղերով, նույնն
արա նաև գլխի նկատմամբ:

3. Յեթե ծառերը կամ թուփը նոսր է, ա-
պա ոգավիր քոյարե—խալաթով:

Այդ բոլոր միջոցները կոզնեն քեզ ան-
նկատելի մնալ նույնիսկ հակառակորդին մո-
տիկ յեղած դեպքում: Սակայն այդ քիչ է:
Պետք է իմանալ, թե նախազգուշաման ինչ-
պիսի միջոցների պետք է դիմի հետախույզը
չարժման ժամանակ:

13. Նախազգուշացման ինչպիսի միջոց-
ներ պետք է պահպանի հետախույզը հետա-
խուզութեան նպատակով շարժման ժամանակ

1. Շարժման ուղին ավելի լավ է ընտրել
ճանապարհներից դուրս:

2. Ճանապարհով շարժվելու դեպքում,
մի գնա նրա կենտրոնով կենտրոնն ավելի
չատ է դիտվում հակառակորդի կողմից:

3. Յեթե ճանապարհի կողքերին առու
կա, ոգավիր նրանից թե շարժվելու և թե
ծածկվելու համար կանգ առնելու ժամանակ
(նկ. 8):

4. Յեթե ճանապարհի յերկու կողքին
ծառեր են տնկած (նկ. 9), ապա շարժվելը




Նկ. 8 ճիշտ է

ճիշտ չէ

նրանց սավերով, իսկ կանգ առնելու դեպքում
ծածկվիր ծառի բնի հետևը:

5. Շարժման և կանգ առնելու ժամանակ
խուսափիր այնպիսի տեղերից, վորտեղ հե-
տախույզի հագուստը խիստ կերպով է աչքի



Նկ. ճիշտ է

ճիշտ չէ

ընկնում (պաշտպանական հագուստը, սև հոդի կամ ձյունի վրա) :

6. Յերբ պատրաստվում են դիտակետը փոխել, ցույց մի տա քեզ, վորպեսզի հակառակորդը ժամանակից շուտ չհասկանա քո նպատակը :

14. Ինչպես անցնել բարձունքների վրայից հետախուզության ժամանակ

Յերբ հետախույզը շարժվելու ժամանակ ստիպված է լինում անցնելու մի շարք բարձունքների վրայով, վորոնցից մեկի վրա նա կարող է հանդիպել դարան մտած հակառակորդին, ապա շարժումը նա պետք է կատարի հետևյալ կերպ. բարձրանալ առաջին բարձունքի գագաթը, ծածկել, և, ուշադրությամբ նայելով, դիտել առջևում ընկած վայրը, հակառակորդի դարանը հայտարերելու համար :

Յեթե չի հաջողվում ձիւտ փորցել, վոր հաջորդ բարունքը գրավված է հակառակորդի կողմից, ավելի լավ է ընդունել, վոր հակառակորդն այնտեղ է և այնուհետև գործել այնպես, վոր կարողանա խաբել այդ հակառակորդին: Ծածուկ շարժվելով, պետք է մոտենալ հաջորդ բարձունքի ստորոտին, արագ կերպով վազել դեպի մի կողմը մի քանի տասնյակ և մինչև իսկ հարյուր քայլ և այնուհետև բարձրանալ վերև: Յեթե հակառակորդը գտնվում է բարձունքի հետևը և, նկատելով

հետախույզին, թակարդ է պատրաստել նրա համար, ապա փոխելով ուղղությունը, հետախույզը խաբում է հակառակորդին և դրանով իսկ հավասարեցնում պայմաններն ընդհատվելու դեպքում :

15. Ինչպես շարժվել անտառի միջով

Անտառով, նրա միջի ճանապարհով անցնելու ժամանակ, անտառի բաց տեղերը պետք է սողալով անցնել կամ անցնել նրա կողքով: Անհարժեշտ է խուսափել անտառային ճանապարհներով շարժվելուց և անցնել նրանցից վորոշ տարածության վրա անտառի միջով: Անտառի միջով անցնելիս, պետք է, վորքան հնարավոր է, անաղմուկ շարժվել, ուշադրությամբ ահանջ դնել ամեն մի ձայնին, թխկոցին, տերեւների խշխշոցին և այլն: Անտառից դուրս գալու ժամանակ պետք է թաղնվել ծառերի հետևը կամ թփերում, դուրս սողալ



Նկ. 10 կողմորոշում բարձրադարձաների միջոցով

անտառի յեզրը և շորս կօղմբ նախելուց հետո,
բարձրանալ դանդաղ և զգուշաբար:

16. Ինչպես խուսափել հետախուզութեան
ժամանակ մոլորվելուց

Հետախույզները և հետախուզական դեր-
քերն ավելի հաճախ ստիպված են լինում աշ-
խատելու առանց հրամանատարի և այն ել
գիշերը, իսկ թեկուզ ցերեկն ել, ապա առանց
ճանապարհների և այն ել կարտուկ վայրում,
կամ թե անտառում: Ամենքին լավ հայանի
յե, թե ինչպես հեշտ և ճանապարհը կորցնել
անտառում կամ գիշեր ժամանակ:

Հետախույզը չպետք է մոլորվի: Հետա-
խույզի մոլորվելը լավագույն դեպքում նշա-
նշանակում է չկարողանալ ձեռք բերել ան-
հրաժեշտ անդեկուլթյուններ և չկատարել հե-
տախույզին առաջադրված խնդիրները, իսկ
վատ դեպքում՝ հակառակորդի ձեռքն ընկնել:
Կարողանա «կողմորոշվել», այլ խոսքով նա
պետք է կարողանա ցանկացած բույեյին վո-
րոշել, թե վորտեղ և նա գտնվում և ինչ ուղ-
ղությամբ պիտի շարունակի իր շարժվելը:

Ինչպե՞ս կողմորոշվել կարողանալ:

Շարժման ուղղությունը վորոշելու հա-
մար ամենալավ և ամենաճիշտ միջոցը կողմ-
նացույցն է: Ամեն մի հետախույզ պարտա-
վոր է սովորել կողմնացույցի միջոցով աշ-
խարհի կողմերը վորոշել, վորոշ առարկայի

ուղղության «աղիմուտը» վորոշել և շարժվել
կարողանալ հիշյալ աղիմուտի» ուղղու-
թյամբ:

Ձեռքին կողմնացույց ունենալով, հրա-
մատարի ողնությամբ հետախույզը 1—2
ժամվա ընթացքում կարող է սովորել կողմ-
նացույցից ոգտվելու ձեռք, և ամեն մեկը այդ
պետք է սովորի:

Շարժման ճիշտ ուղղությունը պահպա-
նելուն և հետախույզի յետ դառնալու խնդիրը
հեշտացնելուն ողնում են հետավոր պարզ յե-
րևացող առարկայերը (դանդաղատուն, գոր-
ծարանի ծխնելույզ, առանձին կանդնած ձառ
և այլն): Դա կարևոր է մանավանդ գիշերը
(նկար 10):


Կողմնացույց չունենալու դեպքում, աշ-
խարհիս կողմերը վորշել (և հետևապես իր
շարժման ճիշտ ուղղությունն ստուգել) կա-
րելի յե արեգակի, ժամացույցի, աստղերի,
ծառերի և քարերի միջոցով:

Արեգակը կեսորին լինում է հարավում: Յե-
թե կեսորին կանգնենք յերեսներս դեպ ա-
րեգակը, մենք կունենանք աջ ձեռքի կողմը
արևմուտք, ձախ ձեռքի կողմը՝ արեւելք, իսկ
հետ դառնալով, կնայենք ուղիղ դեպի հյուս-
սիս: Որվա յուրաքանչյուր ժամին, նայելով
արեգակին, կարելի յե մոտավորապես ասել,
թե վորտեղ է հարավը, վորտեղ արևմուտքը,
արեւելքը և հյուսիսը:

Աշխարհի կողմերը շատ ճիշտ կարելի չէ վորոշել արեգակի միջոցով, ձեռքում ժամացույց ունենալով: Ինչպե՞ս անել այդ:


Ժամացույցը դրվում է զեանին և սեղում այնքան է պտտեցվում, մինչև վոր ժամացույց տվող սլաքը նայի ուղիղ արեգակին: Հարապն այդ դեպքում ցույց կտա՝ ժամացույցի սլաքի առանցքից դեպի 12-ը քաշած դծի և ժամ ցույց տվող սլաքի միջև յեղած անկյունը կիսող գիծը (ժամը 12-ին՝ հարավը կլինի այնտեղ, ուր 12 թվանշանն է, 10-ին՝ հարավը ցույց կտա 11 թիվը, ժամը 6-ին հարավը ցույց կտա 9 թիվը), ժամը 16-ին հարավը կլինի այնտեղ, ուր ցույց է տալիս 2 թվանշանը (նկար 11):

Հյուսիսում միշտ գտնվում է բևեռային



Նկ. 11 Աշխարհի կողմերը վորոշելը ժամացույցի և արեգակի միջոցով
աստղը: Գիշերը, կանգնելով յերեսը դեպի բևեռային աստղը և ձեռքերը տարածելով դե-


պի աջ ու ձախ կողմերը, ձախ ձեռքը ցույց կտա արեմուտքը և աջը՝ արևելքը, հետ դառնալով, կնայես ուղիղ դեպի հարավ: (Նկար 12):



Նկ. 12 Կողմորոշում աստղերի միջոցով

Ամպամած որերին, յերբ արեգակը կամ աստղերը չեն յերևում, աշխարհի կողմերը կարելի չէ վորոշել ուրիշ նշաններով. առանձին կանգնած խոշոր ծառերի բների հյուսիսային կողմը ծածկված է լինում մամուռով. նույն ծառերի ճյուղերն ավելի շատ ձգվում են դեպի հարավ (նկ. 13). քարերը և ծառերի բները հյուսիսային կողմից նույնպես ծածկված են լինում մամուռով: Յեկեղեցիները կառուցվում են բեմը դեպի արևելք, իսկ կաթոլիկական յեկեղեցիները՝ բեմը դեպի արեմուտք:

Խնդիր ստանալով, հետախույզը կողմնա-



Նկ. 13 Կողմորոշում ծառերի միջոցով

ցույցի միջոցով վորոշում է այն «ազիմուրը», վորով նա պետք է շարժվի:

Ձեռքում կողմնացույց ունենալով և չմոռանալով հաճախակի նայել նրան, հետախույզը յերբեք չի շեղվի ճանապարհից՝ վոչ հակառակորդի կողմը շարժվելու և վոչ էլ յետ վերադառնալու ժամանակ: Յեթե կողմնացույց չկա, հետախույզն իր շարժման ուղղությունը վորոշում է աշխարհի կողմերի միջոցով (արևմուտք, արևելք, հարավ, հարավարևելք և այլն): Ճանապարհը կորցնելու դեպքում, հետախույզը նորից վորոշում է՝ վորտեղ է հարավը, հյուսիսը և այլն, և, նորից գտնելով

ճիշտ ուղղությունը, ուղղում է իր սխալը: Մեծ ուղնություն են ցույց տալիս հետախույզին բարձր, լավ յերեացող առարկաները (յեկեղեցու գմբեթ, գործարանի ծխնելույզ, առանձին կանգնած բարձր ծառ, բլուր և այլն):


17. Ինչպե՞ս է կատարվում հետախույզությունը գիշերը:

Հակառակորդը գիշերը մեծ ուշադրությամբ հետեվում է բոլոր ճանապարհներին և արահետներին (կածաններին): Հետախույզը գիշերը պետք է շարժվի ճանապարհից դուրս և չընդվի նախատեսված ուղղությունից:

Գիշերը ծածկվելու համար պետք է ուղտագործել կարողանալ ծառերի, թփերի շինությունների ստվերից: Ըստ հնարավորության, պետք է շարժվել ցածր տեղերով, վորովհետև այդտեղ հետախույզն ընկնում է ստվելի մութ տեղեր, իսկ նրան մտանցող հակառակորդը յերեվում է բաց հորիզոնի դժի վրա կամ պատկերանում է վայրի Փոնի վրա (նկ. 14): Գիշեր ժամանակ հետախույզի համար աչքերը վատ ողնականներ են, պետք է ավելի մեծ հույս դնել լսողության վրա: Յերբ էլ հետախույզը կանգնելու լինի, պետք է նայի և սկանջ դնի: Գիշերային հետախույզության ժամանակ առանձնապես պետք է աշխատել անաղմուկ շարժվել: Սայթաքումներից և խոտերի խշխշոցից խուսափելու համար ավելի

լայ է վտարերն ավելի շատ բարձրացնել և գետին զննել կամաց, կրնկի վրա:

Փափուկ գետնի վրա հետախույզն առաջ



Նկ. 14 Կետագծերով ցույց է տրված հետախույզի շարժման ուղին գիշեր ժամանակ կրունկն է գետնին զնուծ, ապա ամբողջ թաթը (նկ. 15):

Ամուր գետնի վրա առաջ թաթն է գետ-

նին դրվում, ապա զգուշաբար իջեցվում կրունկը (նկ. 16):

Յեթե գիշերը հետախույզը կասկածում է, թե իր դիմաց շարժվում է հակառակորդը, նա պետք է պառկի, կպչի գետնին, և այդ դրու-
թյամբ անշարժ մնա, մինչև չպարզի հակա-
ռակորդի շարժումը: Հակառակորդի հետա-
խույզը չի կարող վոչ մի կերպ հայտարերել
թագնված հետախույզին՝ մինչևիսկ յեթե նրա
կողքով անցնի:



Նկ. 15



Նկ. 16

Գիշերը չպետք է վազել: Չպետք է նաև
թուչել առունների, պատերի և ցանկապատերի

վրայով: Պետք է նրանց վրայով քայլով կամ սողալով անցնել, վորովհետև գիշերն ամեն մի ազմուկ ավելի լավ է լավում, քան ցերեկը:

Գիշերը հետեվակ հետախույզն ավելի առավելություններ ունի, քան ձիավորը: Գիշերը ձին ջղայնանում և ազմուկ է հանում, վորով կարող է մատնել հետախույզին:

Փոշտոցը, հազը կարող են մատնել հետախույզին: Փոշտոցը կարելի չէ կանխել, յեթե քթի արմատը սխմել մատներով: Հազը հաճախ կանխվում է, յերբ թեթև կերպով սխմում են ազամի խնձորը, այլ խոսքով չնչափողի, կոկորդի վրա դուրս ցցված մասը: Ավելի լավ է ջղային հետախույզներ չունենալ, իսկ մրսածներին և հազողներին լավ է հետախույզության չտանել:

Չծխել. մութ գիշերը վառած լուծկուբացը յերեվում է համարյա 1 կիլոմետրի վրա, իսկ ծխախոտի կրակը՝ 1/3 կիլոմետրի վրա:

Գիշերը հետախույզը հաճախ հարկ կլինի հանդիպել լարափակոցի:

Գիշեր ժամանակ լարերի վրայով քայլելու համար, հետախույզն այնքան է կռանում, մոր կարողանա տեսնի փշալարերի շարքերը: Այնուհետև բռնելով մեկ ձեռքով առաջին շարքը, մյուսով շոշափում է յերկրորդ շարքը և վտարը դնելու տեղը, այնպես վեր փշալարին չգիպչի և ազմուկ հանելու համար նրա վրա ամրացրած թիթեղի կտորներին:

Կարելի չէ սողալով անցնել փշալարի տակով, յերեսը դեպի վեր, բարձրացնելով ձեռքով փշալարի ստորին շարքերը:

18. Ինչպիսի՞ ազդանշաններով է ոգավում հետախույզը

Հետախույզության ժամանակ ինչպես ցերեկը, նույնպես և մանավանդ գիշերը պետք է կարողանալ գործել առանց խոսակցության և հրամանների, փոխարինելով այդ ազդանշաններով: Ցերեկը դիրքերը ազդանշաններ են տալիս ձեռքերով կամ ձայնով: Գիշերը ձեռքի ազդանշանները չեն յերեվում, խոսակցությունն ու շշուկը հետախույզների ներկայությունը մասնում են հակառակորդին: Ուստի գիշերը արվող ազդանշանները պետք է նմանվեն ամենասովորական գիշերային ձայներին:

Կարելի չէ գործադրել ձայնական ազդանշանների հետևյալ յեղանակները.

Սանրի ատամները հրացանի կոթին շփելուց առաջացած ձայնը:

Մատիտով կամ փայտի կտորով ատամներին թիթխկացնելու ձայնը, ձեռքի ավերի իրար շփելու ձայնը:

Յեղունկով լուցկու տուփին թխկացնելու ձայնը:

Դատարկ պարկուճի մեջ փչելուց առաջացած ձայնը:

Ձեռքի ահով վարտիկի յերկարությամբ չիելուց առաջացած ձայնը:

Կարելի չէ գործադրել թուշունների և միջատներին նմանեցրած ձայները:

Ինչպիսի ձայն ել լինի, նա պետք է միատեսակ լսելի լինի հարեվան հետախույզներին և գլխավորը՝ հասկանալի լինի նրանց համար:

Դրա համար անհրաժեշտ է նախապես պայմանավորվել, թե վոր ազդանշանն ինչ է նշանակում:

Ազդանշան կարելի չէ տալ շարժումը կազնեցնելու, շարժումը շարունակելու համար, ստուգելու համար, թե արդյոք բոլոր հետախույզներն ել կատարո՞ւմ են իրենց առաջադրանքները, վտանգի մասին նախազուրկացնելու, գրոհի անցնելու, յետ դառնալու համար և այլն:

Իննամարտի ժամանակ պայմանական խոսքը կամ թիվը կողմի զանազանել յուրաքիններին հակառակորդից (որինակ «կրկին»): «Յուրային» բառը ամենաանհաջողն է, վորովհետև հակառակորդները դրանից նույնպես հաճախ են ուզովում:

VI. ՀԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ, ԳԵՏԵՐԻ, ԱՆՏԱՌՆԵՐԻ, ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՅԵՎ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԴԻՐԳԵՐԻ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆԸ

Ա. ՀԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆԸ

19. Ինչի՞ համար և ինչպե՞ս է կատարվում ֆակապարհների հետախույզութունը:

Պատերազմի ժամանակ ճանապարհները կարող են ծառայել թե մեր և թե հակառակորդի զորքերի տեղափոխության համար: Ճանապարհով կարող են շարժվել հետեվակը, հեծելազորը, հրետանին, ավտոմոբիլները և տանկերը:

Պատերազմի ժամանակ զորամասերը կշարժվեն վոչ միայն ճանապարհներով, այլ և նրանցից դուրս: Յերթի ժամանակ զորամասերը սովորաբար փնտռում են ավիացիայի դիտողությունից ծածկվելու միջոցներ:

Յուրաքանչյուր ճանապարհ չի բավարարում բոլոր պահանջները: Ամեն մի ճանապարհով ել չեն կարող շարժվել ամեն տեսակի զորամասերը:

Ճանապարհների մասին վորոշ անհրաժեշտ տեղեկություններ հրամատարը կարող է իմանալ քարտեզի միջոցով (ուղղությունը, վայրերի ջրները, վերելքները): Վորոշ տեղեկություններ նա կարող է ստանալ ճանապարհների նկարագրություններից: Սակայն այդ քիչ է: Անձրևը, անցած զորամասերը և հակառա-

կորզն ինքը կարող են ճանապարհները այնպիսի դուրսի հասցնել, վոր ավելի հեշտ կլինի նոր ճանապարհ կառուցել, քան փչացածը վերանորոգել: Այդ բոլորը վոչ քարտեզը և վոչ ել նկարագրութունը նախատեսել, իհարկե, չեն կարող: Այդ մասին տեղեկութուններ հրամանատարը կտանա միայն ճանապարհների հետախուզության միջոցով:

Ճանապարհների հետախուզութունը կատարում են կամ տեղական բնակիչների հարցու փորձի միջոցով, կամ, վոր ավելի լավ է, հետախուզիչներն իրենք անմիջականորեն են կատարում՝ յեթե հակառակորդը այդ չի խանգարում:

Ամեն մի կարմիր բանակային կարող է ճանապարհների հետախուզության առաջադրանք ստանալ և պետք է կարողանա կատարել այն:

20. Ինչպիսի՞ հարցերի պետք է կարողանա պատասխան տալ նախարհների հետախույզը

1. Ճանապարհի լայնությանը (քանի մետր է, կամ կողք կողքի քանի շարք սայլակներ կամ մարդիկ կարող են շարվել):

2. Ճանապարհների գետինը (կավ, ավազ, յերերուն ավազ, սեվահող, ցեխ, սալահատակ):

3. Ճանապարհի կողքերով հետեվակի և գումակի շարժման հնարավորութունը

(չե՞ն խանգարում արդյոք ծառերը, առունները, ճահիճները և այլն):

4. Ճանապարհի կողքերին կա՞ն արդյոք ծառեր, վորոնք կոժանդակեն զորամասի քողարկմանը:

5. Կա՞ն արդյոք ճանապարհի կողքերին այնպիսի փոսեր և առուններ, վորոնք կխանդարեն ճանապարհից դուրս գալը, յերբ այդ անհրաժեշտ կլինի (ավիացիայի հարձակում և այլն):

6. Վորտե՞ղ կան կամուրջներ (փայտի կամ քարաչեն). կարո՞ղ են արդյոք այդ կամուրջների վրայով անցնել գումակը, հրետանին, ավտոները, տանկերը (պետք է նկատի ունենալ, վոր յեթե կամուրջի վրայով կարող է անցնել խոտով բարձրած գյուղական սայլը, ապա այդտեղից կանցնի և հրետանին, և ավտոները):

7. Վորտե՞ղ այնպիսի դժվար տեղեր կան, վորոնց շուրջը, այդ ճանապարհով շարժվելու ժամանակ, անցնել չի կարելի (կամուրջներ, ճեղանուղիներ և այլն):

8. Ճանապարհի վրա վորտե՞ղ է հարմար խափանումներ կառուցել (փակոցներ, Փուշասներ, փչացնել կամուրջները և այլն):

9. Վորտե՞ղ կան գազերով վարակված տեղեր:

Յերբ առաջադրանք ես ստանում ճանապարհը հետախուզելու, բնագծել այն հարցե-

բը, վորոնք մատնանշել ե հրամատարը, քարտեզի վրա նշանակել շարժման ուղին, կամ ինդրել նրանից, վորպեսզի տա: շարժման նախագիծը, ցույց տալով այն բնակավայրերը, վորոնցով անցնում ե ճանապարհը:

Սովորիք ճանապարհների հետախուզելը դեռևս խաղաղ ժամանակ: Ամեն որ դու գնում ես պարապմունքների և վերադառնում պարապմունքների ճանապարհով. ոգավիբ դրանից ամեն անգամ ճանապարհին նայելով հետախույզի աչքերով կամ պատասխանելով վերը հիշված հարցերին:

Բ. ԳԵՏԻ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆԸ

21. Ինչպիսի՞ հարցերի պետք ե պատասխան տա մարտիկը գետը հետախուզելու ժամանակ

Գետը կարող ե ուժեղացնել մեր պաշտպանությունը, ծածկելով պաշպանվող գործարմասերը տանկերից և գծվարությունների ստեղծելով հակառակորդի հարձակվող գործարմասերի համար: Բայց գետը կարող ե նաև խոչընդոտ հանդիսանալ մեր առաջխաղացմանը, մեր հարձակմանը, ծածկելով հակառակորդի դիրքերը:

Այդ բոլոր դեպքերում հետախույզներից կպահանջվեն պատասխանել հետևյալ հարցերին:

1. Գետի լայնությունը:
2. Խորությունը:
3. Հոսանքի արագությունը:

4. Ինչպիսի՞ հատակ ունի (ավազոտ, կավոտ):

5. Ինչպիսի՞ անիեր ունի՝ ծածկված, թե բաց (հարթ թե ապառաժ):

6. Վորտե՞ղ կան կամուրջներ, ծանծապուր, լատանավեր:

7. Կամուրջի չափը, նրա բարձրությունը և ամրությունը:

8. Ծանծաղուտի խորությունը ինչպիսի հատակ ունի:

9. Ինչպիսի՞ ճանապարհներ են տանում գետի գետը և նրանց անցանելիության աստիճանը հեծելագործի, գումակի, հրետանու, ավտոնների շարժվելու համար:

10. Գումակի, ավտոների և մանավանդ տանկերի համար գետից անցնելու հնարավորությունը կամուրջներից բացի (մեկ մետրից ավելի խորություն ունեցող գետը և մանավանդ յերբ նրա հարավը տղմոտ ե և անիերը ճահճոտ են, անանցանելի՝ թե ավտոյի, և թե տանկերի ու տանկետների համար):

11. Գետի հովտի լայնությունը՝ հնարավորություն կտա՞ արդյոք գետը կրակից և Դնդացիրներից ծածկելու համար:

12. Գետի և նրա հովտի վրա այնպիսի անիեր, վորտեղ ամենից լավ ե փակոցներ սարքել:

Գետի մասին այդ տեղեկությունները կարելի յե ստանալ՝

ա) անձամբ դիտելով:

բ) տեղական բնակիչներին հարց ու փորձով:

գ) անձամբ զննելով:

22. Ինչե՞ս հետախուզել գետը դիտողության միջոցով:

Հետախուզությունը դիտելու միջոցով կատարվում է այն դեպքում, յերբ հակառակորդը խանգարում է մեր հետախուզներին գետը հետազոտելու, իսկ գետը ճանաչող տեղական բնակիչներ հնարավոր չի գտնել կամ դժվար է հավատալ նրանց ցուցմունքներին:

Դիտելու համար պետք է այնպիսի տեղ գրավել, վորտեղից գետը յերևում է, վորքան հնարավոր է, մեծ տարածությամբ: Հետախուզողը գրավում է այդ տեղը, համբերությամբ սպասում է և հետեվում է այն բոլորին, ինչ կատարվում է գետի վրա:


Նա կարող է տեսնել այն տեղերը, վորտեղից անցնում են հակառակորդի ճիւղորները, վորտեղից անցնում են նրա սայլակները և ավտոները, վորտեղ կան այնպիսի կամուրջներ, վորոնց վրայով վոչ վոք չի անցնում (այդ նշան է, վոր կամուրջը փչացած է, կամ վայրը վարակված է թունավորող նյութերով):

Այնուհետև կարող է հայտարերել հուներին տեղեր, նկատելով, վոր անցնում է նախիրը: Հուներով անցնելու տեղերը նա կարող է հայտարերել նաև, նկատելով ճանապարհների ու կաճանների ուղղությունը, վոր գնում են դեպի գետը և հեռանում են գետից:

Գետի հովտում նկատվող ճանապարհները և կաճանները ցույց կտան հետախուզին հովտի անցանելիության աստիճանը: Մարգագետնում կամ ճահճում արածող նախիրը ցույց կտա մարգագետնի կամ ճահճի անցանելիության աստիճանը:

23. Գետի հետախուզությունն անձամբ զննելով

Անձամբ զննելով գետի հետախուզությունը, կարող են կատարել տուանձին հետախուզող,



Նկ. 17 Գետի գետից անցնելը

հետախուզական դիրքը, կամ հետախուզական խմբակը:

Գետի խորութիւնը և նրա հատակի բնույթը կարելի չէ պարզել, յետե գետը չափենք փայտով կամ ուղղակի անցնենք հունով: Գետի լայնութիւնը չափում են աչքաչափով կամ ուղղակի չափելով, յետե այդ հնարավոր է:

Տաշեղի կտոր ջուրը գցելով և հաշիւելով, թե քանի վայրկյանում տաշեղը կանցնի 10 մետր, հետախույզը կիմանա հոսանքի արագութիւնը:

Գետի ափն անձամբ զննելով, կարելի չէ հայտարեբել և հուները: Տրորված կանաչը, ջրի մոտ անասունների և մանավանդ սայլակների հետքերը, այդ բոլորը հունի նշաններ են: Հայտարեբած հունն անպայման պետք է ստուգել անձամբ անցնելով այդտեղից դեպի մյուս ափը:

Գետի հովիտն ուսումնասիրելու ժամանակ, պետք է ուշադրութիւն դարձնել դար ու փոսերին, փորվածքներին, հեղեղատներին, այդ բոլորն ոգնում են գորամասի քողարկմանը:

Փակոցներ կառուցելու համար տեղերը կարելի չէ համարել այնպիսիք, վորոնց շուրջն անցնելը հնարավոր չէ (կամ ուրջներին և հուներին մոտենալու տեղերը, հուները, ճեղանուղիները և այլն):

Դիրքը միանգամից ամբողջ կազմով չպետք է մոտենա գետին, յետե այդտեղ հաւաքակորդի հետ հանդիպում է սպասվում: Այդ դեպքում ավելի լավ է հեռվից աշխատել

վորոշել, թե գրաված է արդյոք գետը հակառակորդի կողմից, թե՞ վոչ: Յետե հակառակորդ չկա, պետք է անցնել գետը:

Դեաքի գետն անցնելու ժամանակ, հետախույզներից մեկն անցնում է գետը (յետե հարկավոր է՝ լողալով), մյուսները տեղավորվում են ծածկված տեղերում, պատրաստ լինելով կրակով պաշտպանել նրան (նկ. 17):

Գետն անցնելով, հետախույզը հետագոտում է ափը և ազդանշան տալիս՝ «անվտանգ է»: Այնուհետև ամբողջ դետքն առաջին հետախույզի դիտողութեան տակ անցնում է գետը:

Յետե անհրաժեշտ է լողալով անցնել հաւաքակորդից մոտ գտնվող գետը կամ լիճը, ապա պետք է փայտերկց և կանաչ ճյուղերից փոքրիկ լաստ պատրաստել և նրա պաշտպանութեան տակ դանդաղ դուրս գալ թագստոցից: Ջուրը չչփել չի կարելի, պետք է այնպես անել, վոր լաստը լողացող թփի տեսք ունենա և այլն:

Յետե հետախույզը լողում է հրացանով, ապա նա մի ձեռքով բարձր բռնում է հրացանը, մյուսով լողում է վորտեղի ոգնութեամբ (գորտի պես):

24. Ինչպե՞ս ձեռք բերել գետը հետախույզելու փորձառութիւնը

Քիչ կան այնպիսի ճամբարներ, վորտեղ գետ, լիճ, կամ լճակ չլինի: Ել ավելի քիչ են այնպիսի կարմիր բանակայիններ, վոր գետն աչքի առաջ յեղած ժամանակ որական մեկյերկու անգամ չլողանային:

Լողանալ՝ ոգտակար բան է: Մակայն նա
 ավելի ոգտակար կլինի, յեթե ամեն մի կարմիր
 բանակային, լողնալու զնալիս, յենթադրի,
 վոր ինքը հետախույզ է, վորից վերադառնա-
 լուց հետո կպահանջեն պատասխանել § 21-ում
 մատնանշված 10 հարցերին: Յեթե այդպիսի
 «հետախուզության» հետեվանքների մասին
 գրավոր կամ բանավոր կերպով նա զեկուցի
 իր հրամատարին, վորը կնշի, թե հետախույզ-
 ները ինչն են ճիշտ կատարել և ինչն են աչքա-
 թող արել, այդ զեպքում ուղղակի շատ լավ
 կլինի: Մի քանի այդպիսի վարժություններ
 կատարելուց հետո (ամառվա ընթացքում 20-30
 անգամ), բոլոր կարմիր բանակայիններն ի-
 րենց համար աննկատելի կերպով ձեռք կրերեն
 գետը հետախուզելու փորձառություն: Լողա-
 նալու ժամանակ կարմիր բանակայինները
 սովորում են և փորձ են ձեռք բերում գետը
 հաղթահարելու համար՝ լողալով առանց հա-
 գուստի, զենքը ձեռքին և հազուստով ու զենքը
 ձեռքին:

Գ. ԱՆՏԱՌԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ

25. Ինչպե՞ս է կատարվում անտառի հե-
 տազոտությունը

Անտառը՝ զորքի համար լավ թաքստոց է
 ոգային թշնամուց, սակայն անտառը նույն-
 պես կարող է խանգարել թե մեր և թե հակա-
 ոակորդի զորամասերի շարժումը: Անտառը
 կարելի չէ ոգտագործել հակառակորդին ծա-

ծուկ մոտենալու համար, նաև կարելի չէ ոգ-
 տագործել պաշտպանության համար: Անտառը
 պաշտպանության լավ միջոց է հակառակորդի
 տանկերից, հեշտացնում է հակառակորդի ճա-
 նապարհի վրա փակոցներ կառուցելը, անտա-
 ռում կայուն դադերն ավելի յերկար են: Վեր-
 ջապես անտառը նյութեր է տալիս կամուրջ-
 ների և այլ կառուցումների համար, դիրքերի
 ամրացման համար:

Ինչ կարելի չէ սպասել անտառից և ինչ-
 պես նրան ոգտագործել մարտական պայման-
 ներում՝ այդ կարելի չէ պարզել հետախուզու-
 թյամբ:

26. Ինչպիսի հարցերի պետք է պատաս-
 խան տա մարտիկն՝ անտառը հետախուզելու
 ժամանակ

Անտառի հետախուզության ժամանակ
 կպահանջվի պատասխանել հետևյալ հարցե-
 րին.

1. Անտառի տարածությունը:
2. Անտառի տեսակը ((խոշոր անա՞ռ, թե՞
 մանրածառ):
3. Ծառերի տեսակները (սաղարթավոր
 կամ խառն անտառ):
4. Քանի՞ ճանապարհ է անցնում անտառի
 միջոցով, վորտեղի՞ց և ո՞ւր:
5. Ինչպիսի՞ գորամասերի համար է ան-
 տառն անցանելի առանց ճանապարհի (անհաս

հետեւակի^ր, անհատ ձեռագրի^ր, սայլակներ^ր,
ավտոներ^ր, տանկերի^ր):

1. Ծածկում է արդյոք անտառն ողային
դիտումից, թե վոչ:

7. Կան արդյո՞ք անտառում ձորեր, ճա-
հիճներ, շինություններ:

8. Կարող ե՞ր արդյոք անտառն ինքնըստին-
քյան կամ փակոցների միջոցով դժվարացնել
հեծելագործի և մանավանդ սայլակների շար-
ժումը, (արդեւրանտառներ, քիմիական խցան-
ներ և այլն):

Անտառի հետախուզության գնալիս, հե-
տախուզին իր հետ պետք է ունենա այս հար-
ցերի ցուցակը: Այդ հարցերին յերբեմն կարելի
յե պատասխանել ուղղակի բառերի ընդգծում-
ներով, որինակ 3-րդ հարցում ընդգծել փշա-
տերեւի բառը, 5-րդ հարցում՝ սայլակներ բա-
ռը և այլն:

Դ. ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆԸ

27 Ինչի՞ համար է պետք բնկավայրերի
հետախուզությունը

Բնակավայրերը զորամասերին թաքստոց
են տալիս ողային դիտողություններից, վատ
յեղանակներից ու ցրտից, տալիս են ջուր և վա-
ռելափայտ: Բնակավայրերում զորամասերը
կարող են ոգնություն ստանալ, բանջարեղե-
նով, խարով, մսով, ալյուրով, հաց թխելով,
սայլերով և բանվորական ուժով: Վորող դեպ-

քերում բնակավայրը, այսինքն նրա շինու-
թյունները կարող են պաշտպանել նաև թշնա-
մու գնդակներից, կարող են ոգտադործվել,
վորպես մարտական թաքստոց:

Չափազանց կարեւոր է հաշվի առնել
բնակչության քաղաքական տրամադրություն-
ները:

Բնակավայրերի հետախուզության նպա-
տակն է՝ այնպիսի տեղեկություններ հավա-
քել, վորոնք կոժանդակեն մեր զորքերին բնա-
կավայրն ավելի լավ ոգտադործելու իրենց
նպատակների համար:

Նայած, թե ինչ տեսակետից է հե-
տաքրքրում մեզ ավյալ բնակավայրը, ըստ
այնմ էլ տարվում է նրա հետախուզություն-
ը:

28. Զորամասի բնակավորման նպատա-
կով բնակավայրի հետախուզության հետ կապ-
ված հարցերը՝

1. Ծխերի թիվը:
2. Զրհորների թիվը, ինչպիսի՞ ջուր է և
մեկ որուգիչերում քանի՞ դույլ ջուր կարող է
տալ յուրաքանչյուր ջրհոր:
3. Վորքա՞ն տներ և գոմեր կարելի յե ոգ-
տադործել մարդկանց և ձիերի տեղավորման
համար:
4. Չկա՞ն արդյոք դյուղում մարդկանց և
ձիերի հիվանդություններ, յեթե կա՝ ինչպի-

սի (առանձնապես պետք է զգուշանալ տիֆից, սապից, սիբիրախտից):

5. Հիվանդանոցների համար պիտանի շենքերը (խոշոր տներ, դպրոցներ, հիվանդանոցներ, թատրոններ, կալվածատիրական տներ):

6. Արդյոք կա՞ խոտ կամ ծղոտ (տակները վռելու համար):

7. Տների մոտ կա՞ն արդյոք այգիներ՝ վորպես թագստոց հակառակորդի ողբային հետախուզությունից):

29. Տնտեսական՞ նպատակներով բնակավայրերի հետախուզության հետ կապված հարցերը:

1. Կա՞ արդյոք խոտ, դարման, և վո՞րքան:

2. Կա՞ արդյոք դարի, վարսակ:

3. Կա՞ արդյոք հաց, միս:

4. Կա՞ արդյոք ալյուրի պաշար:

5. Կա՞ արդյոք ցորենի, հաճարի պաշար և վորքա՞ն:

6. Կա՞ արդյոք չկախած հացահատիկ և վորքա՞ն:

7. Կա՞ն արդյոք ջրաղացներ, հացի փոեր:

8. Վորքա՞ն խոշոր և մանր անասուններ կան:

9. Վորքա՞ն ձիեր և սայլեր կան:

10. Վորքա՞ն դարբնոցներ և դարբիններ կան:

11. Քա՞նի աշխատունակ բնակիչ կա:

12. Բնակչությունը վորչափով է ապահովված բահերով, կացիներով և սղոցներով:

13. Կա՞ արդյոք կոլխոզ, սովխոզ. նրանց ունակությունը, և նրանց մոտ յեղած ալյուրի, հացահատիկների, խոտի պաշարը:

14. Կա՞ արդյոք հացահատիկների հասարակական պահեստ (սերմացու):

30. Բնակչության ֆալաֆակա՞ն հետախուզության:

ՅԵԹԵ հետախուզին հանձնարարված է բնակչության քաղաքական հետախուզություն կատարել, ապա նա պետք է պատասխանի հետևյալ հարցերին.

1. Արդյո՞ք շատ կան մեզ թշնամի դասակարգերի ներկայացուցիչներ (կալվածատերեր, վաճառականներ, հոգեվորականներ և այլն):

2. Կոմունիստների կոմյերիտականների, կոլխոզնիկների, բարբաղների, կարմիր պարտիզանների, խորհրդային ծառայողների, նախկին կարմիր բանակայինների թիվը:

3. Վորտե՞ղ են ապրում կոմունիստների և չքավորների ընտանիքները և ինչպես է նրանց նյութական դրությունը:

4. Ո՞վ է մեզ թշնամի խմբավորումների առաջնորդը:

5. Բնակչութեան վերաբերմունքը դեպի կրօնը և տերտերները, ազդեցութեան աստիճանը բնակչութեան վրա:

6. Չկան արդյո՞ք շրջակայքում սպիտակների հրոսակախմբեր, գոսալիքներ, կանաչների կամ մեր պարտիզանական ջոկատներ:

7. Ո՞ւմ է համակրում բնակչութեան մեծամասնութիւնը:

8. Կողմնակի ո՞վ կա գյուղում բնակվող: Վաղուց ե նա այդտեղ յեկել և ինչով է զբաղվում:

9. Պարզել, թե հակառակորդը ինչպե՞ս է մե արբերվել: Բնակչութեանը չե՞ն յեղել գյուղացիներին ծեծի յենթարկելու, բռնութիւնների, գնդակահարութեան և այլ դեպքեր:

10. Բնակավայրում ի՞նչ զխտեն հակառակորդի մասին (վորտե՞ղ ե նա, ինչքա՞ն ե, ինչպե՞ս ե նրա տրամադրութիւնը, վախկո՞տ ե, թե անխույթ, ինչպե՞ս ե վերաբերվում տեղական բնակչութեանը, ի՞նչ են խոսում հակառակորդի գինվորները պատերազմի մասին. չե՞ն նեղվում նրանք մթերքների կարիքից: Բնակչութեան մեջ հակառակորդը չե՞ ցրել լրագրեր և թերթիկներ, յեթե այս, ապա հավաքել այդ և այլն):

31. Պաշտպանութեան տեսակետից բնակավայրի հետազոտութեան հետ կապված հարցերը

Բնակավայրերը, մանավանդ ձմեռը խո-

ղացել են և դեռ կխաղան խոշոր դեր: Նրանց համար պատերազմի ժամանակ միշտ տեղի կունենան մարտեր, ըստ վորում գյուղը կարելի չէ ողտագործել պաշտպանութեան համար: Նկատի ունենալով բնակավայրերի նշանակութիւնն այդ տեսակետից, անհրաժեշտ է կարողանալ պատասխան տալ հետևյալ հարցերին.

1. Բնակավայրի դիրքը (բարձրութեան վրա, դաշտավայրում կամ ձորում):

2. Կա՞ն արդյոք քարի շենքեր և պարիսպներ, վորոնք կարող են վորպես հենակետեր ծառայել բնակավայրը պաշտպանելու համար:

3. Ինչպիսի՞ տեղեր կան բնակավայրում, վորոնք հնարավորութիւն կտան հեշտութեամբ արգելքներ կառուցել հակառակորդի զրաճապատների և մանավանդ տանկերի շարժման համար:

4. Կա՞ն արդյոք այդիներ և բանջարանոցներ, վորոնք կհեշտացնեն բնակավայրի պաշտպանութիւնը հրդեհի ժամանակ:

5. Կա՞ն արդյոք հրետանու համար ծածկված դիրքեր, դիտակետեր և ինչպիսի՞ն են նրանք:

32. Ո՞ւմ կողմից և ինչպե՞ս ե կատարվում բնակավայրի հետախուզութիւնը կա Բնակավայրի հետախուզութիւնը կատարվում է առանձին հետախուզի, հետախու-

զական դիրքերի և ավելի խոշոր հետախուզական խմբակների կողմից: Քաղաքական հետախուզութիւնը կատարվում է կամ հատկապես նշանակված անհատներին, կամ հենց նույն հետախուզիչների կողմից, վորոնք կատարում են նաև մյուս խնդիրները:

Հետախուզութիւն հիմնական միջոցն է՝ տեղական բնակիչների հարց ու փորձն ու զննութիւնը:


Բնակավայրի հետախուզութիւնն ժամանակ պետք է պահպանել հետևյալ սովորոն՝

1. Բնակավայրին մոտենալիս, քանի ղեռ չես համոզվել, վոր հակառակորդ չկա, ընդունիր, վոր նա այնտեղ է:
2. Նախ քան բնակավայրը մտնելը, վորոչ ժամանակ դիտիր նրան ծածուկ, վորպեսզի պարզես, թե հակառակորդն արդէ՞ք այնտեղ չէ:
3. Բնակավայրին մոտեցիր ծածուկ:
4. Մոտենալով բնակավայրին, ընտրիր ամենաադաւտիկ խրճիթը, և մտնելով ներս, զգուշութեամբ հարցուփորձ արա բնակիչներին, թե արդէ՞ք հակառակորդը գուցե չէ՞, և ընդհանրապես ստացիր հետախուզութիւն հետ կապված քեզ հատաքրքրող հարցերի պատասխանը:
5. Բնակավայրը միայնակ մտիր միայն այն դեպքում, յերբ հաստատ գիտես, վոր

բնակչութիւնը համակրանքով է վերաբերվում դեպի Կարմիր բանակը:

6. Յեթե ղու գտնվում ես դետքի կազմի մեջ, հիշիր, վոր դետքը հետախուզութիւնն է կատարում վոչ միայն տեղական բնակիչներին հարցուփորձով, այլ և ստուգման է յենթարկում ստացած տեղեկութիւններն՝ ուշի ուշով զննելով բնակավայրը:

Դետքի կողմից բնակավայրի զննութիւնից առաջ, նպատակահարմար է վերցնել իր հետ ուղեկից (զաղտնի պատանդ) բնակավայրի ավելի ազդեցիկ անհատներից մեկին:



Նկ. 18 Գյուղի զննութիւնը դետքի կողմից

Գյուղի միջով անցնելիս, դետքը շարժվում է փողոցի յուրաքանչյուր կողմից յերկու ձգված չլիթայի ձևով: Դիտակալներից յուրաքանչյուրը հսկում է փողոցի հակառակ կողմի պատուհաններին ու դռներին:

Դետքի ավազը քայլելով դետքի կենտրոնում, ուշադրությամբ զննում է հարևան փողոցները նրանց խաչմերուկներից: Դիտակալներից մեկը մտնում է մի քանի բակ, վորոնք կասկածելի չեն թվում և զննության է յենթարկում:

Առանձին փոքր ագարակները կամ առանձին տների զննության ժամանակ, վորտեղ կարելի չէ սպասել թշնամու հանդիպումը, դետքը կերպուում է հետևյալ միջոցը. սկզբում ամբողջ դետքը ծածուկ դիտում է ագարակը, այնուհետև դիտակալներից մեկը մտնում է ագարակը, զգուշությամբ շարժվելով, վորքան կարելի չէ, ծածկված ճանապարհով: Մտանալով դռանը, դիտակալը չպետք է ուղղակի գնա դեպի դուռը, այլ պատի տակով, պատին շատ մոտիկ, ձեռքին պատրաստի ունենալով հրացանն ու նռնակը: Դետքի մյուս մարտիկները լավ ծածկված դիրքից հետևում են, ամեն մի բոպե պատրաստ լինելով կրակ բանալ տուներ հետազոտող իրենց հետախույզին պաշտպանելու համար: Մեն-մենակ չպետք է տուն մտնել: Յեթե պահանջվում է, պետք է ներս նայել

պատուհանից, կամ պատուհանի տակ ականջ դնել, պետք է պատի ուղղությամբ զգուշությամբ սողալով մոտենալ պատուհանին: Գիշերը լուսամուտից ներս նայելիս, չպետք է դեմքը մոտեցնել ապակուն:

Չկա այնպիսի ճամբար, վորը չըջապատված չլինի մի քանի տասնյակ գյուղերով: Չկա այնպիսի կարմիր բանակային, վորը յեղած չլինի նրանցից թեկուզ ամենամոտ գրանդվող գյուղերում: Յեթե այդ հաճախումները սովորություն դարձնել, յեթե այդ հաճախումներն ոգտազործել բնակավայրերի հետախուզության պրակտիկա ձեռք բերելու համար, ապա կարմիր բանակը կարճ ժամանակամիջոցում լիկլիղացիայի կենթարկի հետախուզության ամենադժվար մասը՝ կարմիր բանակայինների կողմից բնակավայրերի հետախուզություն կատարելը:

Խաղաղ ժամանակ § 29, 30, 31-ում թված տեղեկություններ ստանալը մի քիչ ավելի հեշտ է, քան պատերազմի ժամանակ: Խաղաղ ուսուցման ժամանակ առանց տեղական իշխանության ոգնության բնակավայրերի հետախուզությանը վերաբերող տեղեկությունները, մանավանդ քաղաքական և անտեսական տեղեկություններ (§ 30, 31) ստանալ կարողատեղեկությունները նույնանման խնդիրներ կկարողանա կատարել նաև պատերազմի ժամանակ:

Նախապատրաստության այդ բնագավա-

ուում ամենից հեշտ է հետեւյալ կերպ վար-
վել: Հրամատարը նախորոք տեղեկան իշխա-
նությունների միջոցով բնակչութեան մասին
ստանում է անհրաժեշտ տեղեկությունները և
այնուհետեւ առաջարկում է հետախույզնե-
րին հավաքել նույն տեղեկությունները, բայց
չդիմելով իշխանություններին: Այդ տարբեր
ձեւով հավաքած տեղեկությունների նմանու-
թյունը կրնորոշի, հետախույզների կողմից
բաղաքական և տնտեսական հետախուզու-
թյան ասպարիզում ձեռք բերած հմտութեան
աստիճանը:


Դ. ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԴԻՐՔԵՐԻ ՀԵՏԱԽՈՒ-
ՋՈՒԹՅՈՒՆԸ

33. Ի՞նչ պետք է իմանալ հակառակորդի
գիրքի մասին

Հակառակորդի գիրքերի հետախուզու-
թյունն անհրաժեշտ է պարզելու համար, թե
վորքան ուժեղ են այդ գիրքերը, ինչպիսի փա-
կոցներով է նա ուժեղացված (լարային, ար-
գելանտառակ և այլն), ինչպե՞ս են զասավոր-
ված այդ փակոցները, հակառակորդը վորտե՞ղ
է դրել իր գնդացիները, ինչպիսի՞ տեղերով
հնարավոր է մուտենալ գիրքերին:

Այդ կապակցութեամբ հետախույզը հրա-
մատարին պետք է պատասխան տա հետեւյալ
հարցերին:

1) Կա՞ արդյոք լարփակոց և քանի շար-
քից է բաղկացած:



Նկ. 19 Առանձին ագարակի գննությունը գիրքի կողմից
(§ 32 կետ 6)

2) Կա՞ն արդյոք անցքեր լարփակոցի մեջ
և վորտե՞ղ ավելի հեշտ է անցքեր բանալ՝ ան-
նկատելի մնալով հակառակորդի համար:

3) Վորտե՞ղ են դասավորված հակառակորդի դիտակետերը:
կորդի գնդացիները՝ առջևի յեզրում, թե դիրքի խորքում:

4. Վորտե՞ղ են հակառակորդի դիտակետերը:

5. Վորտե՞ղ են նրա պահեստի ուժերը:

6. Գործադրե՞լ է արդյոք հակառակորդը կայուն թունավոր նյութեր (ԹՆ)՝ պաշտպանութունն ուժեղացնելու համար:

7. Հակառակորդը միայն խրամատներունի՞, թե կան ապաստարաններ՝ հրետանու կրակից պաշտպանվելու համար և խրամատուղիներ:

34. Ո՞ւմ կողմից և ինչպե՞ս է կատարվում հակառակորդի դիրքերի հետախուզութունը

Հետախույզների դիտողությունը, անմիջական գննությունը, գերիներ վերցնելը և վերջապես մարտի բռնվելը—ահա հակառակորդի դիրքերի հետախուզության միջոցները:

Հակառակորդի դիրքերի հետախուզության ամենահեշտ ձևը դիտողությունն է: Ուշադրությամբ և համբերությամբ դիտելով հակառակորդին, իմանալով ռազմական հատկանիշները, կարելի չէ հավաքել անհրաժեշտ շատ տեղեկություններ հակառակորդի դիրքի և նրա ամբուլթյունների մասին:

Սակայն, հեռվից դիտել միշտ էլ հաջողու-

թյունների չի հանդում: Լարափակոցները կարող են ծածկված լինել վայրի ծաղբերում, թունավորող նյութերի հոսք կարող է չհասնել մինչև մեր դիրքերը, իսկ հակառակորդի գնդացիներն, սպասելով մեր գրոհին, կարող են թագնվել և առժամանակ չհայտարարվել: Այդպիսի դեպքերում առանձին հետախույզները և հետախուզական դիրքերը, ծածկվելով վայրի խորտուրտություններում կամ գեղեքային մթության մեջ, մոտենում են թշնամու ամբուլթյուններին և լրացնում են այն տեղեկությունները, վորոնք ստացված են դիտելու միջոցով:

Ել ավելի շատ տեղեկություններ կարելի չէ ստանալ գերուց: Սակայն միշտ էլ չի հաջողվի աննկատելի կերպով, ծածուկ մոտենալ հակառակորդի ամբուլթյուններին և միշտ էլ չի հաջողվի գերիներ վերցնել: Նման դեպքերում մնում է հետախուզության մի հաստատում և վստահելի միջոց՝ այդ հետախուզությունն և մարտի միջոցով: Հետախուզական դեաքը, անակընկալ հարձակում գործելով հակառակորդի կարևոր կետերից մեկի վրա, անխուսափելիորեն կատարել նրան գնդացրային կրակ փելիորեն կատարել նրան գնդացրային կրակ բանալ և նույնիսկ հակադրոհի դիմել և այդպիսով կոթանդակի մեզ հայտարարելու, թե ամբուլթյունների բնույթը, թե գնդացիների տեղը, թե նրա ոժանդակ ուժերի դասավորությունը:

Վորքան հաջող ընարված լինի հետախու-

գության նպատակով գրահի յենթարկերու կե-
տը, վորքան ծածուկ կատարվեն հարձակման
նախապատրաստությունները, վորքան անա-
կընկալ կատարվի այդ, այնքան հեշտ և արա-
զորեն կկարողանանք ձեռք բերել մեզ անհրա-
ժեշտ տեղեկությունները:

35. Ինչպե՞ս հայտարարել հակառակորդի գնդացիքն ու դիտակետերը

Հարձակվող հակառակորդի ամենասար-
սափելի թշնամին հակառակորդի լավ թաղ-
ցըրած գնդացիքն է: Նա կարող է հարձակվող
ջոկի յերեսին բաց թողնել մեկ բոպեյում 500
գնդակ:

Սակայն պակաս չեն նաև գնդացրի իրեն
ուժեղ թշնամիները-դիվիզիական, գնդային և
գումարտակային հրետանիները, ականանետ-
ները, նռնանետները, մեծակալիքը գնդացիք-
ները, սնայպերները (ամենալավ հրաձիգնե-
րը) և վերջապես հրաձիգները: Գնդացիքին
մեկ հաջող դիպումը բավական է, նրան չար-
քից դուրս հանելու համար: Ահա թե ինչու
նրա համար սովորաբար ընտրվում է դիտո-
ղությունից լավ թաղցրած տեղեր: Յեվ ահա
թե ինչու դիտողի և հետախույզի համար ա-
ռաջնակարգ խնդիր է հայտարարել թշնա-
մու գնդացիքների դասավորությունը, ցույց
տալ այդ տեղերն իր հրետանուն, իր նոնա-
ձիգներին և դրանով իսկ, վորքան կարելի յե-
չուտ, անվնաս դարձնել հակառակորդի գնդա-
ցիքները:

Հակառակորդի գնդացիքները կարող են

դասավորվել բաց դիրքում, կրակելով ուղղա-
կի իրենց առջեվում, ծածկվելով մեր դիտող-
ներից թփերով, կոշտերով, խոտով: Հայտնա-
բերել այդպիսի գնդացիքը համեմատաբար
հեշտ է: Հենց վոր նա սկսեց կրակել, մեր դի-
տողը կնկատի գնդացրի փողի առաջ կամ
բարձրացրած փողին, կամ ծխի մշուշը, կամ
յեռացող ջրի գոլորչին:

Գիշերը գնդացիքը հայտարարվում է նրա
փողաբերանի առջեվում բոցի ընդհատվող
բռնկումներից:

Ուշագիր դիտողը կկարողանա հայտարա-
բել բաց դիրքում գտնվող գնդացիքը նույնիսկ
թմբի յետեվում դիտողը նկատել է հակառա-
կորդի մի խմբակ 2—3 հոգուց բաղկացած: Յու-
րաքանչյուր կարմիր բանակային դիտե, վոր
մոտորի ժամանակ հրաձիգներին չի թույլա-
տրվում հավաքվել խմբակներով: Այտեղից
նա յեզրակացնում է, վոր հայտարարած խմբա-
կը մեկ տեղ է հավաքվել միասին աշխատելու
անհրաժեշտությունից դրդված և վոր նրանք
խմբվել են կամ գնդացրի մոտ, կամ դիտակե-
տում: Դեռևս դժվար է վորոշել, թե իսկապես
այտեղ ինչ կա, բայց ահա, շարունակելով
հետեվել, հետախույզը նկատեց, վոր խմբա-
կին մոտեցավ մի մարդ: Վորոշ ժամանակից
հետո նա գնաց դեպի թիկունքը: Քիչ հետո
այդ տեղին մոտեցավ մի շուն: Դիտողը վորո-
շակի յեզրակացնում է, վոր հայտարարած

խմբակը կարող է միմիայն հակառակորդի դիտակետը լինել: Նկատածի մասին հայտնելով իր հրամատարին, հետախույզը կշարունակի փնտռել գնդացիքը մի այլ տեղում և վերջիվերջը կգտնի:

Ավելի դժվար է հայտարերել հակառակորդի այնպիսի գնդացիքները, վորոնցից մեկը գտնվելով մեր դիմացը, մեզ վրա չի կրակում, այլ թագնվելով մեր դիտողութուններից գնդակի համար անմատչելի հողի թմբի կամ տան հետեվը, կրակը կուղղի մեր հարեվանների վրա, մինչդեռ մյուս գնդացիքը, գտնվելով մեր հարեվանների դիմացը՝ կրակը կուղղի մեզ վրա: Ամենից խաճախ այդպես պետք է դասավորվեն հակառակորդի գնդացիքները պատերազմի ժամանակ: Այդպիսի գնդացիքները կարող է հայտարերել միայն այնպիսի հետախույզը, վորը վարժված է դիտել վայրը վոչ միայն իր առջեվի մասում, այլ և հարեվանների առջեվի մասը:


Յուրաքանչյուր հետախույզ պետք է հիշի, վոր ամեն մի գնդացիք բացի հիմնական դիրքից ունի նաև մի քանի պահեստի դիրքեր: Յենթարկվելով մեր հրետանու կամ գնդացրի կրակին, հակառակորդի գնդացիքները կհասկանան, վոր նրանց գնդացրի տեղը հայտարերված է, և նրանք կաշխատեն աննկատելի կերպով տեղափոխվել պահեստի դիրքերից մեկը: Միայն հայտարերված գնդա-

ցիքներին ուշադրությամբ հետեվող հետախույզը ժամանակին կնկատի հակառակորդի գնդացրի այդպիսի դիրքից դերք փոխադրվելու մոմենտը և կհայտարերի նրան նոր դիրքում:

Իսկ յեթե նա հնարավորություն տա թշնամու գնդացրին աննկատելի կերպով անցնելու նոր դիրքը, ապա հարկ կլինի նորից վորոնել այդ գնդացիքը, սպասելով, թե յերբ նա պարզապես կմատնի իրեն՝ կրակելով:

Չափազանց դժվար է հետախույզի համար հայտարերել այնպիսի գնդացիքը, վորը տեղավորված է ծածկված դիրքում: Այդպիսի գնդացիքը տեղավորում են վորևէ թմբի հետևը կամ ձորակում և կրակում են այդ թագստոցի հետեվից անդրաճիգ կրակով: Այսպիսի գնդացրի տեղը կարելի չէ վորոշել ձայնից կամ սավառտեղի միջոցով: Այնուամենայնիվ այդպիսի գնդացիքների կրակի դեմ կարելի չէ կռվել, նույնիսկ չտեսնելով նրանց: Դրա համար բավական է հայտարերել նրանց դիտողներին, վական է հայտարերել նրանց դիտողներին, վոր չնչայնել նրանց և դրանով իսկ, ինչպես ավոչնչայնել թշնամու գնդացիքը: Ամեն սում են, կուրացնել թշնամու գնդացիքը: Ամեն մի հետախույզ, փնտռելով գնդացիքների տեղերը, պետք է նույնպես ուշադրությամբ փնտռի նաև հակառակորդի դիտակետերը:

Ամեն մի հրաձիգ դեռևս խաղող ժամանակ պետք է սովորի թշնամու գնդացրի փնտռելու



Նկ. 20. Վորտեղ փնտռել թշնամու գնդակները
 ձեռքերը: Վաշտային պարապմունքների, ջու-
 կատային ուսուցման ժամանակ յուրաքանչյուր
 կարմիր բանակային պետք է ձգտի, վորքան
 կարող է, շուտ հայտաբերի «թշնամու» գնդա-
 ցիկները (նկ. 20):

Պարապմունքների վերջում իմանալով,
 թե քանի գնդացի ուներ հակառակորդը, և
 հաշվելով, թե նրանցից քանիսն է հայտա-
 բերված հակառակորդի հետախուզության Ժա-
 մանակ, մենք կիմանանք, թե վոր չափով մեր
 գնդացրոդները կարողանում են ընտրել
 ծածկված տեղերը և վոր չափով մենք կարո-
 ղանում ենք նրանց հայտաբերել:

**V ՀԵՏԱՆՈՒՅՋՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
 ԹՇՆԱՄՈՒՆ ՀԱՆԳԻՊԵԼՈՒ ԴԵՊՖՈՒՍ**

36. Բոլոր հանդիպածներից համարիք հակա-
 աակորդ, մինչև չհամազվես, վոր նա յուրա-
 յին է

1. Հիշելը, վոր հակառակորդը խորամանկ
 է: Թեզ գերի վերցնելու կամ անակրեկալ քեզ
 վրա հարձակվելու համար նա կաշխատի խա-
 բել քեզ: Դրա համար նա կարող է հազնել
 գյուղացու և միքչև իսկ կարմիր բանակայինի
 հազուստ:

2. Մի մոռացիր, վոր յուրայիններին ճա-
 նաչելու համար գոյություն ունեն առ և ան-
 ցարան, վոր պետք է հայտնի լինեն յուրա-
 քանչյուր հետախուզության գնացող կար-
 միր բանակայինի:

3. Կարմիր բանակայինի հազուստով ան-
 ծանոթ մարդու հանդիպելիս, անմիջապես
 նրան վերցրու հրացանի նշանի և հարցրու-

«ինչ է անցարանը»: Յեթե դիմացինդ ճիշտ ասաց անցարանը, ապա դու յեվս պարտավոր ես պատասխանել «ինչ է ասքը» հարցին:

4. Հարցերն ու պատասխանները տուր ցածր ձայնով, վորպեսզի չլսի վորեւե տեղ մոտերում թագնված հակառակորդը:

5. Յեթե հանդիպածդ մարդը «ինչ է անցարանը» հարցին փոխանակ պատասխանելու, սկսեց փախչել, համարիր նրան թշնամի և կրակիր վտաններին, վորպեսզի վիրավորես և նրան գերի վերցնես:

6. Նկատելով դեպի քեզ յեկող միայնակ հակառակորդին, թագնվիր, և մոտ թողնելով նրան, նշան բռնելով հրաման տուր— «գեներ գցիր» և գերի վերցրու: Ավելի լավ է, յեթե կարողանանք չրջապատել թշնամուն ամբողջ դեաքով և ընդհանուր ուժերով անակրնկալ հարձակվեք նրա վրա և զինաթափ անելով, գերի վերցնեք առանց հրաձգության և աղմուկի:

7. Առանձնապես աշխատիր կենդանի բռնել հակառակորդի սպային՝ նա ավելի շատ բան գիտի և ավելի շատ բան կպատմի թշնամու ուժերի և մտադրությունների մասին:

8. Յեթե դու գտնվում ես դեաքի կազմի մեջ, ապա հիշիր, վոր դեաքի հիմնական խնդիրը հետախուզությունն է և վոչ թե մարգը, ուստի հանդիպելով ավելի ուժեղ հակառա-

կորդին և հնարավորություն չունենալով անակրնկալ հարձակման միջոցով վոչնչացնել նրան, ավելի լավ է խուսափել մարտից, շարունակել դիտողությունը և դարանամուտ լինել միայնակներին գերի վերցնելու համար:

9. Նկատի ունեցիր, վոր ձիով, ավտոյով կամ մատոցիկով ամենից հաճախ հրամաններ են տանում: Հրամանը ձեռքին բռնված մեկ գերին ավելի շատ տեղեկություններ է տալիս, քան հակառակորդի հարյուր հասարակ շարքային զինվորները:



Նկ. 21 Թշնամու զրահամեքենան գերի վերցնելու ձևը (§ 36)

10. Միայնակ ձիավորին, և մանավանդ մատոցիկը կամ ավտոն ավելի լավ է բռնել դարանի կամ թակարդի միջոցով:

Ահա մի որինակ. դեաքը շարժվում է ճանապարհի ուղղությամբ և հեռվից տեսնում է, թե ինչպես հակառակորդի զրահապատը է, թե ինչպես կատուցել իջնում է սարից: Դեաքը թակարդ կատուցել է հասցրեց, հակառակորդի զրահապատն անչհասցրեց, սակայն գեաքը գիտի, ցավ դեպի թիկունք, սակայն գեաքը գիտի, վոր յեթե հակառակորդին թիկունքում չբռնեն,

նա յեա կվերագառնա: Գիտակալներն իրենց
հետ ունեն րահեր: Նրանք անցան գործի, և 10
բուպեյից հետո ճանապարհի լայնությամբ
արդեն փորված եր մի անու կես մեար խորու-
թյամբ և լայնությամբ: Առուն ծածկեցին
ճուղքերով և ձողտով, վրան լցրեցին հող ու
փոշի: Հազիվ գործը վերջացրին, յերբ լավեց
մատորի աղմուկը: Այդ հակառակորդի գրա-
հապատն եր վերագառնում հետախուզությու-
նից: Ծանոթ լինելով ճանապարհին, նա գալիս
է առանց առանձին զգուշության և հետեվա-
պես չնկատեց ծածկված առուն, խրվեց նրա
մեջ, շուռ յեկավ և կանգնեց: Զրահապատի
անձնախումբը փորձեց գուրս նետվել գրահա-
մեքենայից, սակայն հետախույզների դի-
պուկի գնդակները տեղն ու տեղը սպանեցին
գուրս թռչողներին, իսկ ձեռքի նոնակը ստի-
պեց մնացածներին սպիտակ դրոշակ բարձ-
րացնել և հանձնվել:

Ավելի հեշտ է դիտել հակառակորդի գրա-
հապատը, յեթե ճանապարհի վրա կամուրջ է
գտնվում: Բավական է սղոցել վոտները կամ
հանելը յերեսը ծածկող տախտակներից մի
քանիսը, դրանց տեղերը ծածկելով շատ բա-
րակ տախտակներով, և հակառակորդի գրա-
հապատը կխորտակվի կամըջի վրա, վորից
հետո դժվար չի գերի վերցնել նրան լեկուզ
գատարի ձեռքերով (նկ. 21 և 22):

Ահա նույն ճանապարհով գալիս է արդեն
վոչ թե գրահամեքենա, այլ թեթև մարդատար
ավտո, մեջը նստած է մի սպա: Ըստ յերևույ-
թին սպան իր հետ հրաման է տանում, կամ
գուցե հետախուզում է ճանապարհը իր գործե-
րի համար:

Մեր հետախույզները թագնվել են ճանա-
պարհի մոտ գտնվող թփերում և սպասում են:
Մեքենան մոտենում է: Հետախույզներից մե-
կը գուրս գալով ճանապարհը՝ գոռաց՝ «կանգ



նկ. 22 Մարդատար ավտոն գերի վերցնելու միջոցը
Առուն փակում է ավտոյի ճանապարհը
առ»: Սակայն շոփերը չլսեց, և ընթացքն ավե-
լի արագացրեց: Վոտոսին ուղղած հետա-
խույզների դիպուկ գնդակները կանգնեցրին
մեքենան: Սպան սկսեց փախչել միաժամանակ
կրակելով, բայց նա շատ չհեռացավ: Հետա-
խույզի գնդակը նրա յետեվից հասավ: Հետա-
խույզները հետազոտեցին թշնամուն և նրա
մոտ մի հրաման գտան: Հրամանում ասված
էր, վոր հակառակորդը ուզում է անցնել մեր
դիվիզայի թիկունքը: Այժմ հակառակորդն
այդ հրամանը ժամանակին չի ստանա, իսկ

մեր գորարանակը, նախագուգաչցված լինելով
հակառակորդի մտազբուխ յուններին՝ մասին,
կնախապատրաստվեն և նրա համար թակարդ
կսարքեն: Յերբ հետագայում կհետաքրքվեն,
թե վոնց յեղով, վոր հակառակորդն այդպես
հեշտությամբ ջախջախվեց, կպարզվի, վոր
պատճառը հետախույզների լավ աշխատանքն
է: Խիզախ, զարգացած և սրամիտ հետախույզ-
հրածիգներից բողկացած մեկ հետախուզական
դեաքը շատ բան կարող է անել:

Ել ավելի հեշտ է գերի վերցնել մոտո-
ցիկլը, միայնակ ձիավորին կամ հեծանիվոր-
դին: Այդ բանը հեշտությամբ կարող է անել
նաև մեկ հետախույզը:

11. Գերի վերցնելու դեպքում, նախ և ա-
ռաջ վերցրու նրա զենքը, այնուհետև վերցրու
բոլոր թղթերը՝ մինչև անձնական նամակները
ներառյալ. հիշիք, վոր հակառակորդը կաշխա-
տի վոչնչացնել այդ փաստաթղթերը և թույլ
մի տալ նրան այդ անելու:

12. Գերուց խլած կամ սպանված թշնա-
մուց վերցրած գրազբուխունը շտապ աչքի
անցկացրու, ստուգիր, թե արդյոք նրանց մեջ
հրաման չկա: Ամեն տեսակի հրաման պետք է
անմիջապես հասցնել շտաբ կամ քեկուզ քո
հրամանատարին:

13. Յեթե հակառակորդը նկատեց քեզ մե-
նակ և սկսեց հետապնդել, այնպես վարվիր,
իրբ դու այդ չես նկատում, ամեն տեսակի մի-

ջոցով ցույց տուր հակառակորդին, վոր էբբ
դու մենակ չես: Նշաններ արա, իբբ կանչում
ես ընկերներիդ, կրակիր սարբեր տեղերից և
այլն:

14. Յեթե հետախույզության ժամանակ
ինքդ ընկնես հակառակորդի դարանը կամ
անսպասելիորեն հանդիպես ավելի ուժեղ
թշնամու, ապա նախ և առաջ հրացա-
նաձուգությամբ զգուշացրու ընկերներիդ վտան-
գի մասին, իսկ ինքդ աշխատիր գնադեղծմամբ,
արագ կերպով նահանջել դեպի մոտ անտառը,
թփուտը, ձորը կամ ուղղակի վարելահողը:

15. Յեթե դարանի մեջ ընկերդ է ընկել,
ոգնիր նրան կրակով, իսկ յեթե կարող ես,
ապա և սվինով:

16. Յեթե ժամանակին հայտարերես
թշնամու գերազանցող ուժը, իսկ ինքդ հայտա-
բերված չես նրա կողմից, ապա շարունակիր
ծածուկ գիտել նրան և անմիջապես հաղորդիր
հրամանատրիդ հակառակորդի մասին:

17. Յեթե հակառակորդը քեզ հայտարե-
րել է, այնպես նահանջիր, վոր հետապնդող
թշնամուն առաջնորդես դեպի մեր գործասե-
րը և այդպիսով կործանես նրան:

18. Յեթե ընկել ես մոտ գանվող հակա-
ռակորդի գնդակոծման տակ, մի պատասխա-
նիր նրա կրակին, մինչև վոր չհամոզվես, վոր
թշնամին քեզ վրա յե կրակում և վոր միայն
գնդակահարությամբ դու կազատվես գերի
ընկնելուց:

ՋԵԿՈՒՑԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

37. ՀԵՏԱԵՈՒԶՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԶԵԿՈՒՑԱԳՐԵՐ

Վայրի և բնակչության մասին տեղեկություններ հավաքելը՝ դեռ գործի մի մասն է: Մնում է ևս մեկ, վոչ պակաս կարեւոր աշխատանք, այն է՝ զեկուցագիր գրել և ամենակարգ ժամանակամիջոցում հասցնել այն ըստ պատկանելույն: Ամենակարեւոր տեղեկությունները վոչ մի արժեք չունեն, յեթե նրանք ստացվում են ուշացումով:

Հետախուզության դնալիս, լավ կլինի, յեթե հետզ վերջնես «հետախույզի դաշտային գրքույկը»՝ զեկուցագիր գրելու համար: Յեթե այդպիսի գրքույկ չունես, ապա խնդրիր հրամանատարին, վորպեսզի քի կտոր թղթի վրա գրի այն հարցերը, վորոնց դու պետք է պատասխանես զեկուցագրում: Ահա այդպիսի թերթիկի ձևվերից մեկը:

Ուճ

Վորտեղից

№

բարտեղ

վորտեղից
կմ
սմ

193

թ.

ամիս

ժամ

րոպե

1. Վճրտեղ և չեբը նկատեցիր հակառակորդին

2. Ինչպիսի հակառակորդ և (հետևվակ, հեծելազոր, հրետանական տանկեր, զրահապատյներ և այլն)

և նրա թիվը

3. Ինչ և (եր) անում հակառակորդը

4. Ինչ ևս դու անում և ինչ ևս մտադիր այնուհետև անելու

Ծանոթություն. Յեթե դու անձամբ հակառակորդին չես տեսել, ալլ միջան լսել ես, մյուս յերկրին գրիր վորտեղից, յերբ և ումից ես լսել:

Ստացողի ստորագրությունը

№

Ստացա

1933

թ

ժամ

րոպե

ին

Ստորագրություն

Յերբ դնում ես դետը, անտառը, դյուղը, ճանապարհը հետազոտելու, հարցրու հրամատարից, թե ինչպիսի հարցերի յե նա պատասխան պահանջում:

Հիշիր, վոր առանց հրամանատարի ոգնության ել դու կկարողանաս զեկուցագիր գրել, պատասխանելով այն հարցերին, վորոնք զետեղված են՝

դետի հետախուզության վերաբերյալ

§ 21-ում,

անտառի հետախուզութեան վերաբերյալ
§ 26-ում,

ճանապարհների հետախուզութեան վերա-
բերյալ § 20-ում,

գիրքերի հետախուզութեան վերաբերյալ
§ 33-ում,

բնակչութեան հետախուզութեան վերա-
բերյալ § 28, 29, 30, 31-ում:

Հաճախակի զեկուցագրերը գրելու փորձեր
կատարիր:

38. Ինչպես սովորել զեկուցագիր գրելը

Վոչ մի գիտութիւն, վոչ մի բանվոր ու-
սուցում չի կարող սովորեցնել քեզ զեկուցա-
գիր գրելը, յեթե դու ինքդ փորձեր կատարե-
լով՝ չվարժվես դրանում: Ինչպե՞ս անել այդ:
Ամեն մի վաշտում կա ավագով լցրած արկղ:
Նշանակիր նրա վրա հակառակորդին (գերք,
գնդացիք, վաշտասյուն և այլն) և դրանից հե-
տո յենթագրիք, վոր դու հետախույզ ես,
հայտարերել ես այդ հակառակորդին և այդ
մասին զեկուցագիր գրիր:

Նշանակված հակառակորդին հեռացնելով
արկղից, քո գրած զեկուցագիրը կարգա ընկե-
րով և խնդրիք, վոր նա քո կարգացածի հի-
ման վրա ավագով լցրած արկղում ցույց տա
հակառակորդի տեղը:

Յեթե ընկերդ քո զեկուցագրի համաձայն
գտավ հակառակորդի դասավորութիւնը,
ուրեմն քո զեկուցագիրը լավ է գրած յեղել:

Յեթե հակառակորդի դասավորութեան տեղի
նկատմամբ բանձաութիւններ լինեն, ապա
այդ ցույց կտա քո սխալը:

Յեթե ինքդ չես կարողանում քո գրած զե-
կուցագրի մեջ յեղած նիւթները հայտարերել,
դիմիր հրամատարիդ, նա քեզ կոգնի:

39. Հիշիր այն բոլորը, ինչի մասին զեկուցագիր
ես ուղարկել

Հիշիր, վոր քո բոլոր զեկուցագրերն ել
ժամանակին տեղ չեն հասնիլ, մի քանիսը կա-
րող են կորչել: Ուստի յերբ վերադառնում ես
հետախուզութեանից, զեկուցիք քո հրամատա-
հին այն ամենը, ինչ դու տեսել ես, լսել ես,
վորոնց մասին զեկուցագիր ես ուղարկել և
հայտնիք, թե ում միջոցով ես ուղարկել զե-
կուցագիրը:

Հիշիր, վոր քո քե զեկուցագրի և քե զե-
կուցումների մեջ ամենից կարեւորը նշմար-
տութիւնն է: Հազարգելով սուտ տեղեկու-
թիւններ, քո հրամատարը առաջագրած
խեղիքը սխալ կլուծի, դրանով իսկ պատճառ
կդառնաս քո գործաւասի վոչնչացմանը:

VII. ԱՄԲՈՂԶ ԿԱՐԴԱՅԱԽԻՅԴ ԱՌԱՆՁՆԱԴՆՍ ԿԻՇԻՐ

1. Յուրաքանչյուր կարմիր բանակային պար-
տավոր է հետախույզ լինել

Լինել հետախույզ՝ այդ նշանակում է,
վոր դու պարտավոր ես տարվա բոլոր յեղա-
նակներին, ցերեկվա և գիշերվա յուրաքան-
79

չյուր առաջագրանքը կատարելու ժամանակ
հավաքել հակառակորդի, վայրի և բնակչու-
թյան մասին տեղեկություններ և այդ բոլորի
մասին գեկուցել քո հրամատարին: Հիշի՛ր, վոր
բացի դրանից քեզ կարող ե տրվել հետախու-
ղությանը վերաբերող հատուկ խնդիր, վորը
պետք ե կատարես դու անհատապես կամ
դեռքի կազմի մեջ:

2. Հետախուղության վերաբերող խնդիր ստա-
նալով, պարզաբանի՛ր այն, ինքդ քեզ պատաս-
խանելով հետեվյալ հարցերին.

ա) Վորտե՞ղ ե ի՞նչ ե քեզ հանձնարարված
հետազոտել և առանձնապես ինչ բանի ուշա-
դրություն դարձնել:

բ) Մոտավորապես վորտե՞ղ ե գտնվում
մեր հետախուղությունն ու պահպանությունը
և ի՞նչ գիտես հակառակորդի մասին:

գ) Ի՞նչ ուղղությամբ պետք ե դնաս և
վորտե՞ղ պետք ե հասնես:

դ) Մինչև յե՞րբ պետք ե հետախուղու-
թյուն կատարես, յե՞րբ և ո՞ւր վերադառնաս:

ե) Ո՞ւմ ե վորտե՞ղ պետք ե ուղարկես զե-
կուցադրերը:

Յեթե չկարողանաս պատասխանել այդ
հարցերից թեկուզ մեկին, ուրեմն քեզ համար
դեռ սարգ չե խնդրի իմաստը և պարտավոր ես
դիմել քո հրամատարին՝ խնդրելով, վոր նա
օգնի քեզ հասկանալու խնդիրը:

3. Նախ քան հետազոտության գնալը, հարցու
քն հրամատարին, թե ի՞նչն ե նրա համար ավե-
լի կարևորը՝ շարժման քաղցնվածությունը,
թե խնդրի կատարման արագությունը: Յեթե
ավելի կարեւոր ե արագությունը, ապա
վորքան հնարվոր ե, արագ գործելով այնուա-
մենայնիվ շարժման և դիտողության՝ ժամա-
նակ մի մոռանալ նաև զգուշության միջոցների
մասին:

4. Թշնամուն դիտելիս, ինքդ քեզ՝ այնպես
պահիր, վոր իբր դու յեվս գտնվում ես թշնա-
մու դիտողության ներքո:

Դիտելու համար այնպիսի տեղ ընտրիր,
վորտեղից թշնամուն տեսնում ես, իսկ նա
քեզ տեսնել չի կարող: Թե ինչպես այդ անել՝
կարգա § 6-7:

5. Սովորիր ուսումնական հասկանիչների միջո-
ցով վորոշել հակառակորդի տեղը, նրա թիվը,
և ինչ ե նա անում (§ 9):

6. Դեռ խաղաղ ժամանակ սովորիր այն-
պես հազնվել և հանդերձանքը այնպես հարդա-
րել վրադ, վոր հակառակորդը դժվարանա քեզ
հայտարերել:

7. Հիշի՛ր, վոր հակառակորդն ամենից
հեշտ կարողանում ե հայտարերել հետախուղ-
չին այն ժամանակ, յերբ հետախուղյալ մեկ
դիտակետից մյուսն ե տեղափոխվում:

Սովորիր նույնպես շարժման ուղին այն-
պես նշել և այնպես շարժվել, վոր թշնամին քեզ

նաև շարժման ժամանակ չկարողանա հայտարարել: Կարգա թե ինչպես ե տրվում այդ:

8. Հիշիր, վոր յեթե հետախուզության ժամանակ մոլորվես, թե ինքդ ես կործանվելու ե թե քեզ առաջագրած խնդիրը չկատարելու վտանգի յես յենթարկելու: Հետախուզության գնալու գեպքում կանխորոշիր, թե ինչ ուղղության պետք ե գնաս ե ինչ ուղղությամբ վերադառնաս: Անցած ճանապարհդ լավ նկատիր ու ճանաչիր, մինչև իսկ դիրքի կազմում գործելու ժամանակ, վորպեսզի կարողանաս ինքդ գանել յես դառնալու ճանապարհը, յեթե քեզ ուղարկեն զեկուցագիր տանելու:

9. Գիշերը հետախուզության դուրս դալիս հիշիր, վոր հակառակորդը մանրագնին հետեվում ե բոլոր ճանապարհներին: Ճանապարհներից դուրս շարժվելու ժամանակ, անկվածության միջոցները պահպանելու գեպքում, հմուտ հետախույզը ամենազգուշար խնդիրը գիշերն ավելի հեշտ կկատարի, քան ցերեկը՝ ամենահեշտ խնդիրը: Անփորձ հետախույզը գիշերը գեռ հարյուր քայլ չանցած, կմոլորվի ե առաջադրած խնդիրը չի կատարի:

Հակառակորդը վոչ միայն աչքեր, այլ ե ախանջներ ունի: Հետեվաբար՝ հետախուզության մեջ յեղած ժամանակ, քիչ խոսիր, հաճախակի ոգավիր ազգանշաններով ե պայմանական նշաններով, սովորիր գործնականում

ոգավիր § 18-ում թված բոլոր ազգանշաններից, իսկ հետախուզության գնալուս պայմանավորվիր ընկերներէդ հետ, թե ինչպիսի ազգանշաններով պիտի ոգավես:

10. Յերբ ճանապարհների, անտառի, գետի, դյուղի ե հակառակորդի դիրքերի հետախուզություն կատարելու առաջադրանք ստանաս, սույն գրքի ցանկով գտիր համապատասխան կետը, կարգա, թե ինչ հարցերի պետք ե պատասխանես, ե հարցրու հրամատարիդ, թե զրոնցից վոր հարցերին պետք ե առանձնապես ուշադրություն դարձնես, ե վոր հարցերը կարելի յե աչքաթող անել:

11. Հետախուզության ժամանակ վորևե խնդիր կատարելիս, գուզընթացաբար կատարիր նաև հակառակորդի ե տեղական բնակչության քալախական հետախուզությունը, քեկուզ ե հրամատարն այդպիսի խնդիր տված չլինի:

12. Պաշտպանվող հակառակորդին հետախուզելու օճամանակ, քո առաջին պարտականությունն ե՝ վորոշել հակառակորդի գնդացիների, հրանոթների ե դիտակետների դասավորման տեղերը:

13. Ամեն մի խնդիր կատարելու ժամանակ աշխատիր գերիներ բռնես: Հիշիր, վոր դա ամենալավ միջոցն ե հակառակորդի մասին տեղեկություններ ստանալու համար: Առանձնապես աշխատիր գերի վերցնել սպային: Բռնածդ գերուց վերցրու նրա մոտ

յեղած բոլոր թղթերը, թույլ չտալով վոչնչացնել այդ փաստաթղթերը:

14. Սպանվածից վերցրու բոլոր փաստաթղթերը, միաժամանակ պոկելով նրանց ուսադիրները (պագոններ) և կոճկառները (պեալիցաները), նրանց միջոցով կարելի չէ իմանալ, թե սպանվածը զորքերի ինչ տեսակից է, ի՞նչ զորամասից է: Հիշիր, վոր բոլոր այդ տեղեկությունները պետք են հրամատարին՝ բշխամուն հաղթելու համար:

15. Հիշիր, վոր հետախուզության ժամանակ քեզ կվիճակվի հաճախ հանդիպել հակառակորդի զրահապատներին և տանկերին: Մի փախիր նրանցից, հիշիր, վոր զնդակը քեզանից արագ է թռչում, յետևիցդ կհասնի: Հետախուզության ժամանակ զրահապատներից և տանկերից պաշտպանվելու ամենալավ միջոցը քողարկումն է: Հիշիր, վոր տանկը խուլ է և կիսակույր. ամեն մի թումբ, ամեն մի փոս, կամ թուփ կծածկեն քեզ տանկից: Չորս վերջոկից ավելի հաստություն ունեցող ծառի հետևվը, կամ մեկ մեար խորություն և լայնություն ունեցող սուվի մեջ գտնվելու դեպքում դու անխոցելի յես տանկի համար:

Հիշիր, վոր խորամանկությամբ և խելագիրությամբ դու կփրկվես վոչ միայն տանկից ու զրահապատից, այլ և կկարոճանես նրան:

16. Հետախուզության ժամանակ չմոռա-

նա փոխադարձ ոգնության մասին: Ոգնությունն ավելի շատ պետք է հետախուզության ժամանակ, քան վորևէ այլ դեպքում, յերը նկատում ես քո հետախույզ ընկերոջը սպառնացող վտանգը, ոգնիր նրան, թեկուզ դրանով վտանգի յենթարկես քո անձնական կյանքը: Վիրավորներին մի թողնիր: Յեթե ուժերդ չեն ներում՝ քեզ հետ տանելու սպանվածին, սպաթագցրու նրան, նախապես պոկելով նրա կոճկառները և վերցնելով բոլոր փաստաթղթերը:

17. Հիշիր, վոր հակառակորդին վերաբերող ամենակարեվոր տեղեկությունները վոչ մի արժեք չեն ունենա, յեթե դու ուշացնես այդ տեղեկությունները քո գորամասին հաղորդելը:

Հետախուզության գնալու ժամանակ, զեկուցագիրն ավելի արագ կազմելու համար, քեզ հետ վերցրու զեկուցագիր պատրաստի բլանկները (ձեվերը—§ 37): Յեթե պատրաստի ձև չկա, գրիր ինքդ: Հեծելազորը և մանավանդ տանկերն ավելի արագ են շարժվում, քան հետևավակ հետախույզի հետ ուղարկած քո զեկուցագրերը: Այդպիսի հակառակորդի հայտնվելու դեպքում, քո զորամասին զգուշացրու հրահրության կամ այլ պայմանական նշանի միջոցով (հրթիռ, ձեռքի նոճակի պայթյուն և այլն):

18. Մի փորձիր այս գրքից վորևէ բան սերտել բերանացի: Հիշիր, վոր մանյովրների և մարտի ժամանակ կհարողանաս անել միայն



այն, ինչ արել էս գործնականում՝ ուսուցման
ժամանակ :

Այս գիրքը համարիք վորպես մի ոժանդակ
ձեռնարկ՝ դաշտային ուսուցման նախապատ-
րաստվելու համար, և ինչպես տեղեկատու
մանկավրճներում և մարտում հետախուզուր յուն
կատարելու ժամանակ :

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I	Ընդհանուր հատկացողութիւնն հետախուզութեան մասին	3.
II	Ինչպէս և կատարուած դիտողութիւնը հետախուզութեան	6.
	ժամանակ	19.
III	Ինչպէս և գործում մարտիկը հետախուզութ. ժամանակ	19.
IV	Ճանապարհներէ, դետերի, անտառներէ, բնակավայրերի և հակառակորդի դերքերի հետախուզութիւնը	38.
V	Հետախուզների գործողութիւնը թշնամուն հանդիպելու դեպքում	69.
VI	Չեկուցազրերի մասին	76.
VII	Ամբողջ կարգացած իցդ առանձնապէս հիշելը	79.

« Ազգային գրադարան



NL0215620

Ф. 85 Ч. 1.

41. 726

М. ВАСИЛЕНКО
Красноармеец в разведке
Армгиз-Военный отдел

355

4-26